Թ. ՏԱՐԻ 2654 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 19 ՏՐԻ 4385 27 ՆՈՅԵՄԲԵՐ 1892 20 ՃԻՄԱԶԻԼ ԷՎՎԷԼ 1340 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سى اداره‌سنه

Direction du journal **AREVELK**
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	դահեկան արծաթ		150
» »	Վեցամսեայ	» »		75
» »	Եռամսեայ	» »		40
Օտար երկիրներէ	Տարեկան	Ֆրանք		56
» »	Վեցամսեայ	»		28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպագր.	Տարեկան	Օսմ. Ոսկի		2
Գաւառաց թղթատարի ծախքը	[illegible]		Դրուշ	50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՆՈՅՄ. 27/9 ԴԵԿՏ. 1892

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՔ

Ի ՍԵՐՊԻԱ

Ի Սերպիա, կացութիւնը բաւական հեռի է։ Ոսկւոյ վրայ տարբերութիւնն 100ին 12 ու կէսի բարձրացած է։ Գլխաւոր վաճառականք ուանք Ներկայացան Նախարարին, և խնդրեցին միջոցներ ձեռք առնուլ՝ ոսկեդրամի բարձրացման առաջքը կտրելու համար։ Կացութիւնը ծանրացնող պարագայ մը եւս կայ՝ սա է որ Դանուբի վրայ Նաւարկութեան փակումը կը մօտենայ, երբ ծովային վաճառականութիւնը կը դադրի պալքանեան Պետութեանց համար, և գինեը շատ վար ըլլալով, ցորենի արտածում չկայ Սերպիայէն։ Խոզերու եւ գուարներու քիչ մը տուրեւառ կ'ըլլայ թէեւ, բայց բաւական չէ՝ պէտք եղածին չափ ոսկի բերելու ի Սերպիա։ Վերջին մի քանի շաբաթներու միջոցին, կառավարութիւնը մեծաքանակ թղթադրամ հանեց Նորէն, ընթացիկ ծախքերը գոցելու եւ առաջիկայ կտրոնի վճարումն ապահովելու համար։ Այս պարագայք եւ վաճառականութեան կայուն վիճակը բարձրացուցին ոսկւոյ արժէքն, այսինքն՝ բնիկ թղթադրամին յարգը կոտրեցին։ Գանձային յոռի մատակարարութիւնը քաղաքական կացութեան վրայ եւս ազդած է։ Զանազան կարգի վճարումներ վերստին անկանոնութեան մատնուած են։ Հանգստեան թոշակներն եւս։ Առաջիկայ երեսփոխանական ընտրութեանց մէջ մեծամասնութիւն ստանալու համար այժմու Նախարարութեան ձեռք առած միջոցներն ոչ Նուազ կը քննադատուին Պելկրատի լրագրաց մէջ։

Ի մասին արտաքին աշխարհավարութեան, Սերպիա եւս առաւել աննշան դիրքի մէջ է։ Ռուսիոյ հետ բանակցութեան սկսած է առեւտրական դաշնագրոյ մը կնքման համար։ Ռուս բանագնացն է Պ. Թիմիրազեվ, որ ռուս պատուիրակ էր Ռուսիոյ և Թուրքիոյ առեւտրական դաշնագրին կնքման առթիւ։ Զարն առ Պ. Ռիսթիչ ետ ղրկած լինելով այն հանրագիր զոր արմատական կուսակցապետներէն մատուցեր էին՝ խնամականներուն և արդի «ազատական» կամ Ռիսթիչեան Նախարարութեան դէմ ռուսական աջակցութիւն խնդրելով, Զարին ընթացքը կը ցուցնէ թէ Ռուսիա դէթ առայժմ Սերպիոյ քաղաքական գործերուն միջամտելու կողմը չէ։

Ի ՉԵՌՆԱԿՈՐԱ

Չեռնակորայի կամ Սեւ Լերան Նըկատմամբ եւս Ռուսիա զգուշաւոր ընթացք մը բռնած է ժամանակէ մ'ի վեր։ Փեթերսպուրկի արքունեաց և չեռնակորեան իշխանական գերդաստանի բարեկամական երկարժամանակեայ յարաբերութիւններ մեծապէս տկարացած են, և Նիքոլա իշխան իւր սեփական ոյժերով իւր պէտքերն հոգալ հարկադրուած է։ Չեռնակորայի Նկատմամբ Ռուսիոյ ընթացքին այս փոփոխում շատ անյարմար ժամանակի մը եկաւ Սեւ Լեռնցւոց համար։ Զի հինգ տարիէ ի վեր է որ Չեռնակորայի մէջ հունձքն անյաջող կ'երթայ, ժողովուրդն առատութեան երես չտեսնելէ զատ գրեթէ ամեն ձմեռ սով կը կրէ, որով գանձն ալ դատարկ կը մնայ, և ճիշդ այս անձուկ կացութեան մէջ ռուսական օգնութիւնը կը դադրի։ 1878 էն ի վեր Չեռնակորա բաւական յառաջդիմութիւն ըրած է թէեւ, բայց արտաքին դէպքերու մասին իւր ակնկալութիւնք ի դերեւ ելած են, և Ռուսիա չուզեր փոխարինութիւն ընել։

Ի ՌՈՒՄԱՆԻԱ

Կը յիշուի թէ Պուքրէշի ռուսական Նախորդ դեսպան Պ. Հիթրովօ կարեւորագոյն դեր կատարած էր Պալքանեան իրաց և գործոց Նկատմամբ, և իւր մէկ Նախկին թարգմանն՝ Եաքովլեւ պուլկար կառավարութեան յանձնած էր կարգ մը հետաքրքրաշարժ թուղթեր, որք հրատարակեցան Սոֆիայի պաշտօնական լրագրոյն մէջ, և ապա հերքուեցան Ռուսիոյ արտաքին գործոց Նախարարութեան կողմէ իբրեւ շինծու գրութիւններ։ Այս դէպքերէ ետք Պ. Հիթրովօ իւր կառավարութեան կողմէ Ճափոնի մայրաքաղաքը ղրկուեցաւ իբրեւ դեսպան, և յայնմհետէ իրերն աւելի խաղաղ երեւոյթ առին ի մասին պալքանեան քաղաքականութեանց։ Ի Ճափոն եւս Պ. Հիթրովօ ժամանակ կորուսած չէ Նշանաւոր հանդիսանալու։ Խափանել տուած է ճափոնական Ջի-Շիմփօ թերթն՝ հակառուս յօդուածի մը համար։ Միւս կողմէ, ճափոներէն պաշտօնական թերթ մը կը պաշտպանէ զՊ. Հիթրովօ՝ եւրոպեան մամլոյ ամբաստանութեանց դէմ, և կը մերժէ այն կարծիքը մանաւանդ թէ Պուքրէշի Նախորդ դեսպանը Պուլկարիոյ իշխանին հակառակ դիտումներ ունեցած ըլլայ երբեք։ Ուստի, Միքատոյի հպատակներուն կ'ըսուի որ այսպիսի սխալ կարծիք չտածեն Պ. Հիթրովոյի մասին։ Ի վերայ այսր ամենայնի, ռուս հանրածանօթ դիւանագէտ մը, Ռուսքիյ Վէսթնիք հանդիսին մէջ գրելով, Եաքովլեւի կողմէ երեւան հանուած թուղթերը վաւերական կը նկատէ, բնաւ ի հաշիւ չառնլով Պ. Շիշքինի պաշտօնական հերքումն որ այն ժամանակ ծանուցուեցաւ ամեն երկրաց լրագիրներու մէջ։ Պալքանեան թերթեր շատ գոհ մնացած են Պուքրէշի Նախկին դեսպանին ի Ծայրագոյն Արեւելս փոխադրուելէն, որ ապացոյց մ'եւս է թէ ռուս կառավարութիւնն արտաքին խնդիր չի փնտռեր հիմա։

ԶՄԵՌՆ Ի ՎԻԵՆՆԱ.— Սաստիկ ցուրտ կ'ընէ Վիեննայի մէջ և շրջակայքն։ Արդէն շաբաթէ մ'ի վեր Պոլսոյ մէջ տիրող փոթորիկներն ի կեդրոնական և հիւսիսային Եւրոպա ձմրան սաստկապէս սկսած ըլլալուն մէկ փոքր Նմոյշն են լոկ։ Բայց Վիեննացւոց մարդասիրութիւնը մեծ է, և Աւստրիոյ մայրաքաղաքին աղքատաց համար հիմնուած են ընդարձակ և տաք սրահներ, զորս Պարոն Քէօնիկսվարդեր հաստատած էր, եւ իրմէ ետքն անհատական Նուիրատուութեամբք շարունակուած են ցայսօր։ Աղքատք ձրի կ'ընդունուին այս սրահներ՝ տաքնալու համար, եւ ոլոռնի տաք ապուր և հացի խոշորկէկ կտոր մը կը բաշխուին ամեն եկողներու։ Ցուրտը սաստկանալուն պէս, ձրի ճաշարանները դիմող խեղճերուն թիւն եռապատկեցաւ, և հինգ սրահներուն մէջ այսօր 5,000 աման ապուր և Նոյնքան կտոր հաց կը բաշխուին ամեն օր։ Տեսնելու բան է խեղճերուն տաքուկ ապուրը խմելը բերաննին այրելով, և խոշոր խոշոր պատառներով հաց կուլ տալն, որով կրնաք գաղափար մը կազմել թէ ինչ է անօթութիւն։ Երեք տարեկանէ վար փոքրիկ տղայքն ալ կը բերուին մէկ մէկ փոքրիկ դգալով, և տախտակամածին վրայ Նստած կը լպրտեն իրենց ապուրի բաժինն։ Օրն ողջոյն մայրը կը մխիթարէ լացող մանկիկները թէ զիրենք տաք սենեակը պիտի տանի, ուր ապուր խմելու բախտը պիտի ունենան։ Հապա ա՛յն խեղճերն՝ այր թէ կին՝ որք հացի և ապուրի իրենց բաժինն ուտելէն ետեւ՝ անյագ աչքերով կը Նային իրենց քով Նստողներու կերածին. զի ձմրան խստութեան պատճառաւ գործ և հետեւապէս ապրուստ չգտնող խեղճերուն 24 ժամուան մէջ ընդունած միակ սնունդն այս ապուրն և այս հացն ըլլալով, կը պատահի որ սովորական բաժինն իրենց քաղցը չյագեցնէ։ Միւս կողմէ, աղքատներուն վիճակին մօտէն տեղեկանալ և անոնց օգնել ուզողներ այս ձրի ճաշարանները դիմելով ամեն բան աչքով կը տեսնեն և ականջով կը լսեն առանց միջնորդի։ Ցնցոտիներ հագած տժգոյն և Նիհար տղաքներուն տուած կարճ ու կտրուկ պատասխաններն ոչ Նուազ հրահանգիչ են ծնողաց երկար բարակ բացատրութիւններէն՝ իրենց խեղճութեան պատճառներուն ու պարագաներուն վրայ։ Հնտախտի ժամանակ եւս այս ձրի ճաշարանք շատ օգտակար են. զի տրուած ապուրը Ռուսիոյ ձրի թէյատուներուն մէջ բաշխուած թէյին տաքցնող հանգամանքներն ունենալէ զատ, միանգամայն սնուցիչ եւ կազդուրիչ է։

ՌՈՒՄԱՆՔ ԵՒ ՅՈՅՆՔ — Խնդիր Յունաց Պատրիարքութեան.— Փարիզի Բարոյական և քաղաքական Գիտութեանց Ակադեմիոյ վերջին Նստին մէջ, Ժօրժ Պիպէսքօ իշխան ռումեն ազնուական գրագէտը բացատրեց Ռումենիոյ վանքերու կրօնային և հայրենասիրական ծագումը։ Ռումէն իշխանք և պոյարք իրենց հիմնած այս վանքերն ընծայելով Ս. Տեղեաց, Նշանակած էին կտակագրերու մէջ թէ Ս. Տեղեաց Նկատմամբ իրենց առատաձեռնութիւն իբրեւ Նըպաստ միայն պէտք է համարուի։ Յոյն աբեղայք որք այս վանօրէից մատակարար կարգեցան՝ ծայրայեղութեան տարին այս իրաւունք, և ռումեն իշխանաց արգելիչ անօրինութիւնք Նպատակին չհասան։ 1821ին, Յունաստանի գործոց միջոցին, յիշեալ աբեղաներ ռումանական երկրէն ետ ղրկուեցան բարձրագոյն հրամանաւ։ Միջնորդութեամբ ռուս Տէրութեան, 1827ին վերահաստատեցան իրենց Նախկին պաշտօնին մէջ։ Յոյն աբեղայք Ս. Տեղեաց ձօնեալ այս վանքերն իբրեւ իրենց սեփականութիւն Նկատեցին, և զանոնք կառավարեցին իբրեւ բացարձակ տէր, Յունաց Պատրիարքարանի հաւանութեամբ, որ յայսմ համամիտ էր Երուսաղէմի Պատրիարքութեան։ Այս վերջնոյն պահանջմամբ ոյժ գտնելով միւս կողմէ, երկար ժամանակ անհամաձայնութիւն տեղի ունեցաւ յոյն աբեղայից և ռումեն իշխանաց՝ Պիպէսքոյի, Սթիրպէյի և Գուզայի միջեւ, որք ուժով պաշտպանեցին ռումէն երկրին շահերն յոյն կղերի ոտնձգութեանց դէմ։ Գուզա իշխան 1863ին կարեց Նետեց այս խնդիր, զոր 1858 ին ի Փարիզ համախմբեալ Դեսպանախորհուրդն առկախ թողած էր։ Նոյն իշխան 1863 դեկտ. 15 ին հրամանագրով մը աշխարհականացուց ամեն վանքեր, քաղաքային իշխանութեան յանձնելով զայն։ Ս. Տեղեաց, որոց ընծայեալ էին այս վանքեր, մէկ անգամէն 82 միլիոն ղրուշ առաջարկեց իբրեւ Նպաստ, ինչ ինչ պայմաններով։ Ս. Տեղեաց միաբանութիւնը մերժեց, և 1867 ին Ռումենիոյ խորհրդարանն յայտարարեց թէ յիշեալ վանօրէից դատը փակուած է վերջնապէս։ Բայց Յունաց Պատրիարքարանն այնպէս չի Նկատեր, և վանքերուն Ռումենիոյ կողմէ գրաւման հակերպելով հանդերձ, Ս. Տեղեաց համար Նպաստ մը կապուիլը կը պահանջէ հիմա։

ՕՏԱՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ի ՌՈՒՍԻԱ.— Ռուս կառավարութիւնն անգամ մ'եւս մերժեց Սիպերիոյ երկաթուղիները շինելու առաջարկը զոր Ներկայած էր ֆրանսացի դրամատիրաց խմբակ մը։ Ռուս կառավարութիւնն որոշեց զի օտարազգիք չմասնակցին Սիպերեան շինութեան։ Ռուսիա հակառակ է օտար ճարտարագէտներու և դրամագլուխներու ընդունելութեան Սիպերեան մեծ ձեռնարկութեան մէջ, որ զուտ ռուսական բան մը կը Նկատուի։ Բայց այս պատճառաւ իսկ, առձեռն դրամագլուխ չկայ մեծաքանակ, գործին տնօրէնութիւնը լաւ ձեռքերու մէջ չէ, և շինութիւնը տարիէ մ'ի վեր շատ դանդաղապէս յառաջ տարուած է։ Ուսուրիի ճիւղին շինութեան հազիւ թէ սկսուած է։ 230 քիլոմեդրէն 12 ը միայն լմնցած է այն փոքրիկ ճիւղին վրայ։ Եւ այն մասին վրայ կ'աշխատին 3,000 զինուորք, և Նոյնչափ ալ դատապարտեալներ և աքսորականներ, Նաեւ չինացի և քորէացի բանուորներ։

Ի ՍՈՒՏԱՆ, տեղացի ցեղերն որք հպատակ են Խարթումի էմիրին և անոր տեղակալ Օսման Տիկնային, վերջերս կենդանութեան Նշաններ տուին վերստին։ Դէպ ի Սուաքին յառաջանալ փորձեցին, բայց Նոյմ. 11/23 ին յաղթուեցան եգիպտական զօրագնդէն ի Թէքէրին։ Ի Սուաքին գալէ յառաջ պէտք էր զՏօխար եւ առնէին, բայց այս պարտութեան վրայ քաշուեցան այն կողմերէն։ Եգիպտացի զօրքեր ղրկուեցան ի Սինքերաթ զարնելու սուտանցի ցեղեր, և բոլորովին ի Նահանջ դարձնելու զանոնք։

ԲԱՆԱՄԱՅԻ գործին քննիչ խորհրդարանական յանձնաժողովն հրաւիրեց և լսեց զՊ. Ալպէռ Կրէվի, (եղբայր հանգուցեալ Ժիւլ Կրէվիի,) որ յայտարարեց թէ յայտնապէս Փրանսայի Պանքայէն ընդունած է 200,00ի ֆր.ի գումար մը, ի փոխարինութիւն իւր մասնակցութեան երաշխաւոր խմբակին և իբրեւ դատական խորհրդական կամ խնամակալ Պառոն տը Ռէյնաքի։ Ծերակոյտի անդամ և Թան լրագրոյ տնօրէն Պ. Էպրառ չուզեց ըսել թէ իւր վարած լրագիր ո՛ր աղբիւրէն կը քաղէր իւր լուրեր։ Գալով Բանամայի գործին մասնակցութեան, յայտարարեց թէ Խորհրդարանին անդամակցելէ շատ յառաջ, 26 տարիէ ի վեր, արդէն կը զբաղէր հանրային շինութեամբք։ Իւր պաշտօնակիցներէն շատերու պէս, ինքն ալ կը պնդէ թէ իրաւունք ունէր ճարտարարուեստական ձեռնարկութեամբք պարապելու։ Երեսփոխան Պ. Նաքէ հաստատեց թէ Զօր. Պուլանժէ չէր կրնար դրամ ընդունած ըլլալ Բանամայի ընկերութենէն։ Մարդուն մեղքը մ'առնէք պարապ տեղը։ Սեղանաւոր Պ. Փոհն, ընկեր Ռէյնաք, Փոհն եւ Ընկերութեան, չէքերու վրայ երեւցած ստորագրութեանց մասին դիտողութիւններ ըրաւ, և խոստացաւ Նորէն քննել տումարները՝ Նոր տեղեկութիւններ հաղորդելու համար։

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ մէջ Պ. Ստամպուլով մտադրած ըլլալով Սահմանադրութեան վերաքննութիւն մը կատարել, Վիեննայի կառավարական Բրէսէ լրագիրն այս բանն ապացոյց կը Նկատէ Պուլկարիոյ Ներքին հանդարտութեան և խոհեմութեան։

—Գերմանիոյ ընդհանուր հիւպատոսն հրահանգ ընդունած է Պուլկարիայէն պահանջել 1890էն ի վեր անվճար մնացեալ ինչ ինչ գումարներն։

Պ. ՌԻՊՈՅԻ Նորակազմ Նախարարութիւնն որոշեց՝ Խորհրդարանի և քննիչ յանձնաժողովոյ փափաքանաց համաձայն՝ Պառոն տը Ռէյնաքի մարմնոյն դիազննութիւնը կատարել տալ բժշկաց ձեռամբ, քանի որ անոր մահուան պարագայից մասին կասկած յայտնողներ եղած են։ Կը յիշուի թէ այս խնդիր մին եղաւ Պ. Լուպէի Նախարարութեան պաշտօնանկութեան պատճառներէն. զի այս վարչութիւն, Նկատելով թէ բժիշկ մը յայտարարած էր թէ արտասովոր բան չկայ Պառոն տը Ռէյնաքի մարմնոյն վրայ, պէտք չէր տեսներ դիազննութեան։

Ի ԳԵՐՄԱՆԻԱ օրուան խնդիրն է միշտ զինուորական Նոր օրէնքի վճռաբանութիւնը Ռայխսթակի մէջ։ Գրուեցաւ թէ Հարաւային Գերմանիա կը մերժէ այս Նոր օրէնք։ Պաւիերայի խնամակալը, Վիւրթեմպերկի և Սաքսոնիոյ թագաւորները, ցոյց տալու համար թէ հարաւային Գերմանիոյ կառավարութիւնք Նոյն օրէնքին կուսակից են, Պերլինի Դաշնակցային Խորհրդոյն (որ կառավարութիւններ կը Ներկայացնէ) պատուիրակ ղրկեցին իրենց պատերազմական երեք Նախարարներ, որք աւելորդ է ըսել թէ զօրաց թուոյն և զինուորական ելմտացոյցին յաւելման կուսակից են Զօր. Քափրիվիի չափ։ Բայց թէ Դաշնակցային Խորհրդոյ սոյն համաձայնութիւնը բաւական պիտի ըլլա՞յ Ռայխսթակին քուէարկել տալու զինուորական Նոր օրէնքն, այդ ալ ուրիշ խնդիր մ'է որոյ վրայ այժմէն գուշակութիւն ընող չկայ։

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ խնդրոյն վրայ Պապին կողմէ տրուած պայմանն անընդունելի կը հռչակեն ռումեն լրագիրք, որք կը յիշեցնեն թէ արդի Կարոլ թագաւորին և Էլիզապէթ թագուհւոյն ամուսնութեան միջոցին ալ թէեւ Պապը պայման դրած էր որ զաւակները կաթոլիկ կրօնի մէջ մեծնան, բայց անոնց աղջիկ զաւակը՝ հանգուցեալ Մարի իշխանուհին՝ օրթոտոքս կրօնին մէջ մկրտուեցաւ՝ հակառակ Վատիկանի դիտողութեանց։ Նմանապէս, թէեւ գահաժառանգ Ֆերտինանտ իշխանին անգլիացի բողոքական Մարի իշխանուհւոյն հետ ամուսնութեան առթիւ Պապը պայման կը դնէ որ զաւակները կաթոլիկ ըլլան, բայց օրթոտոքս պիտի ըլլան, աղջիկ թէ մանչ, այդ մասին օրէնքը բացորոշ է, և այս մասին վերջին խօսքն օրէնքին է, կ'ըսեն ռումեն լրագիրք միահամուռ։

ՍԸՐ ՃԷՐԱԼՏ ՓՈՐԹԱԼ, և ո՛չ թէ Պ. Սթէնլի, անուանեցաւ անգլիական լիազօր պատուիրակ ի քննութիւն Ուկանտայի վիճակին։ Սըր Ճէրալտ Զանզիպարի անգլ. ընդհանուր հիւպատոսն և քաղաքական գործակատարն է, և արդէն ի Զանզիպար գտնուելով, երեք շաբթուան ճամբայ աւելի մօտ է Ուկանտայի քան Անգլիայէն մեկնելիք ո՛ և իցէ պաշտօնատար։ Անգլիացիք մեծ պէտք ունին շուտով մարդ ղրկելու Ուկանտա, ուստից մարտ ամսոյ մէջ պիտի քաշուին հանուին բրիտանեան Ընկերութեան պաշտօնատարք, և եթէ այս շաբթու մեկնի Զանզիպարէ, հազիւ մինչեւ այն ատեն Ուկանտա կը հասնի անգլ. պատուիրակն։ Եւ յետոյ, կ'երեւի թէ Պ. Կլատսթօն այնքան վստահ չէ Պ. Սթէնլիի վրայ, որ զարնելու կոտրելու և բնիկներն ահաբեկելու չափազանց հակում ցուցած է իւր ափրիկեան արշաւանաց մէջ։

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (21)

Է. ՌԻՇՊՈՒՐ ԵՒ Է. ԼԻՑԷՆ

ՓԱՐԻԶԻ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՔ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԵՂԱՆԻՆ ԷՆՐԻԷԹԱ

—Այն ատեն, Նայեցայ և տեսայ որ շատ գեղեցիկ մարդ մը իջաւ կառքէն, որ քանի մը վայրկեան կեցաւ․ յետոյ սպասուհին եկաւ խօսեցաւ կառապանին հետ որ խարազանեց իր ձիերը։ Ասկից յայտնի էր որ այցելութիւնը պիտի երկարէր։

—Դուք դիտող էք, պարոն։

—Իրաւունք ունէի, վասնզի մարդը տակաւին դուրս չելաւ։

—Ա՛հ, ապահո՞վ էք այդ մասին։

—Կատարելապէս ապահով։

—Է՛հ, ըսէք տեսնեմ, կառապանին համազգեստը գեղեցի՞կ էր։

—Նռնագոյն զգեստ, արծաթէ ծայրամետաղներով սեւ ժապաւէն։

—Եւ գոնակին վրայ զինանշաններ անշուշտ, այնպէս չէ՞։

—Այո, կապոյտ զինանշան մ՚ ոսկի կէտերով և պսակ մը։

Դերակոմսին զինանշանները կապտագոյն էին ոսկի անթիւ աստղերով։

Սպասուհին ուզածներն իմացած էր և Նոյն իսկ տիրուհիին իրմէ խնդրածէն աւելի։

—Ահա լմնցաւ, ըսաւ շուրթերը թրջելով թարմ ջուրով լի գաւաթի մը մէջ։

Ստակը վճարելով դուրս ելաւ։

Կասկած չարթնցնելու համար, ուղղակի Ջիթելլայի տունը մտաւ, ուր չնչին տեղեկութիւն մը հարցուց դռնապանին։ Յետոյ փութաց իր տիրուհիին քով դառնալ որուն համբերութիւնն սկսած էր հատնիլ։

—Ի՞նչ լուր, հարցուց Էնրիէթա։

—Օրիորդ Ջիթելլա, թիւ 23 տունը, մանկամարդ օտարուհի, բայց իր երեկոյթներէն ոչ ոք կ'ընդունի։

—Գեղեցի՞կ է։

—Այնպէս կը կարծեմ։

—Տեսնելու եմ զինքը։

—Այս պահուս դժուար է։ Կը հաւաստեն թէ այցելու մը ունի։

—Ինչէ՞ն գիտես։

—Դիմացի պաղարարը ապահովցուց զիս թէ ժամ մը առաջ Նռնագոյն և սեւ համազգեստով կառապան մը․․․

—Պ. տը Պռոնեի՞ համազգեստը։

—Այնպէս կը կարծեմ։

—Շարունակէ։

—Տունին առջեւ կեցեր է։ Գեղեցիկ ազնուական մը վար իջեր է կառքէն և Ներս մտեր է։

—Յե՞տոյ։

—Յետոյ, կառքը մեկներ է, և երիտասարդը տակաւին դուրս չէ ելեր։

—Սրահ մը կա՞յ այդ պաղարարին խանութը։

—Առաջին յարկը։ Խանութին մէջ Նշանակուած է։ Ասկից կը տեսնուին փողոցին վրայ Նայող պատուհանները։

—Շատ աղէկ։ Լուիին ըսէ որ կառքը փողոցին միւս ծայրը տանի և դուն ինծ հետեւէ։

Վայրկեան մը ետքը, Էնրիէթա և Ժիւլի պաղարարին խանութը կը մտնէին։ Այս վերջինն յոյժ զարմացած էր։

—Սրահ մը ունի՞ք, հարցուց դքսուհին։

—Այո, տիկին, շատ գեղեցիկ սրահ մը։

—Բանի մը շաքարապատուղներ բերել տուր ինծ։ Սենեկապանուհիս կը ծառայէ ինծ։

Ժիւլի պաղարարին քովը մնաց, որ ակնարկով հարցափորձեց զայն։

—Սո՛ւս, ըսաւ անոր ցած ձայնով․ տիկինը կուզայ դիտելու իր ամուսինն, զոր կը կարծէ թէ արուեստագիտուհիին տունն է։

—Խե՛ղճ կին, մրմռաց պաղարարը ծիծաղելէ չեշտով։

Էնրիէթա Նստած էր պատուհանին առջեւ, անանկ մը որ բան մը չկորսնցունէ փողոցին մէջ անցած դարձածէն։

Ժամ մը անցաւ։ Տակաւին ոչ ոք դուրս ելած էր թիւ 23 տունէն։ Շուայտուհին անհամբերութենէ և զայրոյթէ կ'եռար։

Ցանկարծ վարձու կառք մը կեցաւ դըրան առջեւ։

Անկից իջնող մարդն, երբ իրեն դարձաւ կառապանին ստակը վճարելու, դէմքը լոյսին մէջ երեւցաւ։

—Տարօրինա՛կ բան, ըսաւ Էնրիէթա, Ժիւլի՛, չե՞ս կարծեր որ այս մարդ քիչ մը Նմանի․․․

—Կեցէ՛ք, տիկին․․․ բայց, այո, Սըր Ճօն Հարրին։

—Ճի՛շդ։ Եւ ասիկա կարմիր մազեր ունէր․․․։ Գնա Նայէ որի՞ն տունը կը մտնէ։

Ժիւլի դուրս վազեց։

—Պարոն, ըսաւ դռնապանին, պարոն մը չմտա՞ւ հոս։

—Այո։

—Պ. Մալլէին տունը չի գնա՞ց։

—Հոս Պ. Մալլէ չկայ։ Այս պարոնը օրիորդ Ջիթելլային տունը գնաց։

—Ուրեմն սխալեցայ․ տէրս մօտակայ տունը մտած պիտի ըլլայ։ Ներեցէք, պարոն։

Ժիւլի ետ դարձաւ վազելով։

—Անոր տունը գացեր է, տիկին, ըսաւ Էնրիէթային։

—Ուրեմն Մարսէլ դուրս պիտի ելնէ, եթէ տակաւին հոն է։

Բայց, քսան վայրկեան ալ սպասուելէ ետք, ոչ Մարսէլ ոչ անծանօթն երեւցած չէին։

—Շատ ուշ հասած պիտի ըլլանք․․․ ըսաւ Էնրիէթա։ Մեկնինք․․․ անոր տունը պիտի երթամ։

Քառորդ ժամ ետքը, վերջապէս դուրս կ'ելնէր Մարսէլ։

Եթէ Էնրիէթա քիչ մը աւելի համբերութիւն ունենար, պիտի տեսնէր անոր անցնիլը պաղարարին տան առջեւէն, և անոր երեսը Նայելէ ետք, պիտի կրնար ուրիշ շատ ենթադրութիւններ ընել։

Մարսէլի դէմքը պատանքի պէս ճերմակ էր։

ԺԱ

ԾՈՒՂԱԿԸ

Էլիզապէթ, պարագային յարմար դէմք մը առնելով, երկու անգամ զարկաւ այրի Մօպէրին դուռը։ Լուիզ բացաւ։

Շեղակի Նայուածքով մը դիտելով հանդերձ մանկամարդ աղջիկը, վերակացուհին բարի քաղաքացուհւոյ բարեւ մը տուաւ անոր։

—Հէ՛, հէ՛, ըսաւ իրովի, պարոն կոմսն աղէկ ճաշակ ունի․․․

«Հո՞ս կը բնակի տիկին Մօպէրը, հարցուց փայփայուն ձայնով։

—Այո, տիկին, պատասխանեց Լուիզ մէկդի քաշուելով որպէսզի ճամբայ տայ այցելուհիին։ Ինծի՞ թէ մօրս հետ կը փափագիք խօսիլ։

—Ձեր տիկին մօրն, և ձեզ հետ ալ, աղջիկս։

—Մայրիկ, ըսաւ Լուիզ քիչ մը զարմացած այս անակնկալ այցէն, տիկինը ձեզ հետ խօսիլ կ'ուզէ։

Այրին կիսովին ելաւ անկողնոյն վրայ և խոնարհեցաւ ըսելով․

—Ձեզ մտիկ կ'ընեմ, տիկին։

Էլիզապէթ բարեսիրտ կնոջ մը կերպարանքն առաւ բոլորովին։

—Տիկին, ըսաւ, տիրուհիիս կողմէ ղրկուեցայ, որ Պէլլի պառոնուհին է, Ռօսթան կոմսուհիին բարեկամուհին։

Այս վերջին անունն երկու կիներու շուրթերուն վրայ երանութեան ժպիտ մը բերաւ։

—Աստուած օրհնէ տիկին Ռօսթան կոմսուհին, ըսաւ Լուիզ։

—Ա՛հ, ո՜րչափ իրաւունք ունիք այդպէս խօսելնուդ, սիրելի օրիորդ։ Ի՜նչ սիրտ․․․ Արդ, տիկին տը Ռօսթան տեսաւ իմ ազնիւ տիրուհիս․ ձեր դժբախտութիւնները պատմեց անոր, և տիկին պառոնուհին ուզեց մասնակցիլ անոր բարեգործութեան։ Դժբախտաբար, շարունակեց Էլիզապէթ, տիրուհիս տունը մնալ պարտաւորուած է յօդացաւէ, և որովհետեւ կուզէ տեսնել ձեզ, պաշտօն յանձնուած է ինծ երկուքդ ալ անոր մօտ տանելու։

—Աւա՜ղ, տիկին, ըսաւ այրին, կը տեսնէք որ չփոխուած ենք այդչափ բարութենէ․ բայց ես ալ գամուած եմ անկողնիս մէջ․ աղջիկս միայն կրնայ կատարել տիկին պառոնուհիին փափաքը։ Կը լսե՞ս, Լուիզ։

—Պատրաստ եմ, մայրիկ։

—Է՛յ ուրեմն, մեկնինք, աղջիկս։

«Կառքը Նորէն պիտի բերէ օրիորդը, մտահոգ մի՛ ըլլաք, տիկին, սակայն քիչ մը պիտի ուշանայ․․․ վասնզի տիկին պառոնուհին խօսակցութիւնը կը սիրէ։

—Մաքի, Բօլ, շնորհակալ եղէք տիկնոջ, ըսաւ հիւանդը երկու տղաքներուն, որք անդադար վերակացուհիին երեսը կը Նայէին։

Մաքի՝ իր վարդագոյն մատներուն ծայրովը համբոյր մը ղրկեց։ Իսկ Բօլ, իր անդրանիկ քրոջ շրջազգեստին մէջ կծկուեցաւ առանց բառ մը արտասանելու։

Կարծես այս տղան բնազդն ունէր գուշակելու այն անձերն, որք չարիք կուզէին իր քրոջը։

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ
ԼՈՒՐԵՐ

Վանայ գաւառական խառն ժողովին որոշմամբ՝ վիճակին առաջնորդական փոխանորդ կարգուած է Արժ. Սահակ վարդապետ, վանահայր Արճէշի վանուց։

Պանտըրմայի ու Պալըքէսիրի առաջնորդ Գեր. Տիմոթէոս եպիսկոպոս Սափրիչեան՝ իր ծերութեան ու հիւանդութեանը պատճառաւ հրաժարական գրած է յԱզգ. Պատրիարքարան։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տնտեսական Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

Գնալը կղզիի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ անուշկի տասնամեայ մատակարարութեան հաշուեցոյցն՝ 1892 յունուար 1էն հոկտ. 31, ըստ օրինի Տնտեսական Խորհրդոյ ներկայացուած և անոր յար և նման մի օրինակն յիշեալ եկեղեցւոյ բակն կախուած է ի տես Թաղեցւոց։

Տնտեսական Խորհուրդն այսու պաշտօնական ծանուցմամբ հրաւէր կը կարդայ յիշեալ կղզիի Պատուարժան ազգայնոց որ նոյն հաշուեցոյցին վրայ եթէ որ և է դիտողութիւն կամ բողոք ունին, Թուականէս մինչեւ 21 օր պայմանաժամու մէջ գրաւոր կերպիւ ներկայացնեն Տնտեսական Խորհրդոյ։

Սոյն պայմանաժամին լրումէն յետոյ՝ որ և է բողոք կամ դիտողութիւն անլսելի պիտի մնայ։

(Կնիք)

26 նոյեմբեր 1892

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ
1893 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Սեփականութիւն Ազգ. Հիւանդանոցի

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԷՐՎԻՉԷՆ

Ազգ. Վարչութեան Կրօնական ժողովոյ կողմէ վաւերացեալ սոյն Օրացոյցն հրատարակուած է արտօնութեամբ Կրթական Նախարարութեան, Սէրվիչէն ճոխ տպագրութեամբ և վիճակագրական ընդարձակ ծանօթութեամբք։

Ընդարձակ Օրացոյցն իւր յաւելուածական մասին մէջ կը պարունակէ՝ Օսմ. Կայսրութիւն, Աւագանի կայսերական պալատան, նախարարք Բ. Դրան, մեծ պաշտօնատարք մայրաքաղաքիս, կուսակալք նահանգաց, Օսմ. դեսպանք յօտար երկիրս, դեսպանք օտար տէրութեանց ի Կ. Պոլիս, եւայլն։

Հայրապետութիւն Ամենայն Հայոց, մայիս 5ի ընտրութիւնն և Համազգային Ընտրողական ժողովն, Պատրիարքութիւն Կ. Պոլսոյ, Ազգ. Կեդր. Վարչութիւն և Տեսուչ Խորհուրդք, պաշտօնէութիւն Ազգ. Պատրիարքարանի, Դպրեվանք Արմաշու, Պատրիարքութիւն Ս. Երուսաղէմի, Առաջնորդութիւնք Թուրքիոյ, Կաթողիկոսութիւնք Կիլիկիոյ և Աղթամարայ, Հովուութիւնք յօտար երկիրս, բարեգործական և կրթական գլխաւոր հաստատութիւնք (Ազգ. Հիւանդանոց, Կեդր. Վարժարան, Արուեստագիտական ուսումնարան աղջ. Բերայի, Միացեալ Ընկերութիւնք Հայոց, Գալֆայեան Որբանոց, մասնաւոր վարժարանք եւայլն)։ Վիճակագիր Ազգ. վարժարանաց Կ. Պոլսոյ, Թաղային խնամակալութիւն Բերայի, գլխաւոր վանորայք և վանահայրք ի Թուրքիա, հայերէն լրագիրք ի Կ. Պոլիս, պատրիարքունիք և ազգապետք։

Բայց ի սոյն վիճակագրական ծանօթութիւններէն, 1893ի Ընդարձակ Օրացոյցը կը պարունակէ Թուրքիոյ Ասիական ու Եւրոպական քաղաքներէն՝ աշխարհի ամեն մասանց հետ լաստրուղ հեռագրական հաղորդակցութեանց մանրամասն սակացոյցը (Թարիֆա), ինչպէս նաեւ Օսմ. միջազգային ու ներքին թղթատարութեանց՝ ծովու և ցամաքի ճամբով հաղորդակցութեանց ամբողջ ժամանակացոյցը։

Կը պարունակէ միանգամայն ծանօթութիւններ 1892 տարւոյ հնտախտին վրայ և հնտախտի դէմ նախազգուշական միջոցներու վրայ չորս մասէ և երեսուն յօդուածէ բաղկացեալ բժշկական հրահանգներ, մասնաւորաբար ի պէտս գաւառացի ժողովրդեան։

Ինչպէս կը տեսնուի սոյն հակիրճ բովանդակութենէն, Ազգ. Հիւանդանոցի Ընդարձակ Օրացոյցը նախորդ տարիներէն ճոխ ու նորագոյն պարունակութիւն մը ունի։

Գին ԵՐԿՈՒ ղրուշ

Վաճառման կեդրոնատեղին է Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան Գրասենեակը ի Պոլիս, Մեծ-Նոր-Խան, միջնայարկ Թիւ 48-49-50։

Հոգաբարձութեան կնիքը չկրող օրինակները վաւերական չեն։ 356

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Պետրոս Դուրեանի ՏԱՂՔ ԵՒ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՔ անուն գործոյն ՌՕԹԸՐՕՐԴ ֆօնման՝ բաժանորդագրութիւն կ'ընդունուի ի Կ. Պոլիս Պալենց եւ Զարդարեան գրատուններ. բաժանորդագինն է 13 դրշ. գաւառաց համար եւ Կ. Պոլսոյ համար 10 դրշ. իսկ յետ տպագրութեան գաւառաց համար 23 դրշ. եւ Կ. Պոլսոյ համար 20 ղրուշ։

Բաժանորդագրութիւնք պիտի փակուին ՏՕՍՆԸՐՕՐԴ ֆօնմէյին հրատարակութենէն յետոյ։

Հրատարակիչք

Բ. ԷՖՔԵՐՃԵԱՆ ԵՒ Պ. ՊԱԼԵՆՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

Բանալի շաղաղրութեան Ս. Դաւիթեանի

Դ. եւ Ե. Ֆօնմաներ

Գին իւրաքանչիւրին 40 փարա

ՇԱՏ ԿԱՐԵՒՈՐ.— Մօտակայ գաւառաց համար պէտք կայ չորս վարժուհիի եւ 2 տնօրէն դասատուի։ Դիմել առ Ս. Դաւիթեան, Դագաքեր խանի։

344 2-3

Ներքին լուրեր

ՊԱՇՏՕՆԱՆՔ.— Սանճէ Միթէմայիզի աստիճան տրուեցաւ Հանեաի երեւելիներէն Նաիմ Պէյզատէ Հիւսէյին պէյի և Մանաստըրի վերաքննիչ ատենին ընդհանուր դատախազ Րէշատ պէյի։

Երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան եւ Լիագաթի արծաթ չքանշան տրուեցաւ Բարձր. կայսերադուն իխլանաց ուսուցիչներէն հազարապետ Րիֆաթ էֆէնտիի. Նոյնպէս չորրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան և Լիագաթի արծաթ չքանշան՝ գեր-հազարապետ Նուրի էֆէնտիի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՄՈՒՆՔ.— Կայս. Իրատէ մը հրամայած է ամսական 2925 ղրուշի հանգստեան թոշակ մը յատկացնել Ատանայի Գօզան գաւառին նախորդ կառավարիչ Սաատէտտին պէյի։

—Ֆրանսական կառավարութիւնը Օֆիսիյէ տ'Աքատէմիի տիտղոսը նուիրած է Պրուսայի հիւանդանոցին առաջին բժիշկ Սավախտս էֆէնտիի. Կայս. Իրատէ մը արտօնած այդ տիտղոսի գործածութիւնը։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ.— Բարձր. Մեծ-Եպարքոսը եւ Ներքին գործոց Վսեմ. Նախարարն երէկ կայս. պալատ երթալով ստացան Վեհ. Սուլթանի հրամանները։

Ի Բ. ԴՈՒՌՆ.— Անգլիական դեսպան Սըր Քլար Ֆօրտ երէկ Բ. Դուռն երթալով յաջորդաբար տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին և Վսեմ. Խորհրդականին հետ։

ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍ Ի Կ. ՊՈԼԻՍ.— Վեհ. Սուլթանն հրամայած է Արուեստահանդէս մը կազմակերպել ի Կ. Պոլիս, ուր ի ցոյց պիտի դրուին Թուրքիոյ արուեստական, ճարտարագործական և այլ արտադրութիւնք ինչպէս նաև Եւրոպայէ բերուած ամեն տեսակ ապրանքներ և ճարտարագործական արտադրութիւններ։

Այդ արուեստահանդէս պիտի կազմակերպուի ի Շիշլի ընդարձակ գետնի մը վրայ։ Մասնագէտ անձերէ բաղկացեալ յանձնաժողով մը պիտի կազմուի որ պիտի հսկէ արուեստահանդէսի կազմակերպութեան, շէնքերու կառուցման և այլ պարագաներու վրայ։

ՍԵԲԱՍՏԻՈՅ Նորընտիր կուսակալ Խալիլ պէյ իւր պաշտօնատեղին ժամաներ և արժանավայել պատիւներով ընդունուեր է նախորդ կուսակալին և քաղաքային ու զինուորական պաշտօնէից կողմէ։ Խալիլ պէյի պաշտօնը վաւերացնող կայս. Ֆէրմանի ընթերցումը տեղի ունեցեր է մեծ հանդիսիւ, յաւարտ որոյ բարեմաղթութիւնք եղած են վասն կենաց Վեհ. Սուլթանին։

Նախորդ կուսակալ Մէմտուհ պէյ ճամբայ ելած է մայրաքաղաք գալու համար։

ՀՆՏԱԽՏ.— Առողջապահական վարչութիւնը հնտախտի դէպքերու վրայ հետեւեալ տեղեկութիւնները հաղորդած է կայս. պալատան առաջին քարտուղարութեան.

Նոյեմբեր 25ին ի Բեզիա 4 մարդեր հնտախտէ բռնուեր են։

Հոտէյտայի առողջապահական վարչութիւնը նոյեմբեր 23 թուականաւ հեռագրած է թէ Եէմէնի ու Ասիրի մէջ 14 օրէ ի վեր հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։

Տրապիզոնի մէջ նոյեմբեր 22ի երեկոյէն մինչեւ 23, հնտախտի երկու դէպք և հին ու նոր բռնուածներէն երկու մահ. Նոյեմբեր 24ի երեկոյէն մինչեւ 25, 5 դէպք ու 2 մահ. Տրապիզոնէն մէկ ժամ հեռուն գտնուած գիւղի մը մէջ չորս օրուան միջոցին 4 դէպք ու 2 մահ. Նահանգին միւս կողմերուն մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։

ԿՐԵՏԷԻ կուսակալի փոխանորդ Մահմուտ փաշա անցեալ երեքշաբթի իրիկուն կառավարական պաշտօնատան մէջ պաշտօնական հացկերոյթ մը տուեր է ի պատիւ՝ Սուտա նաւահանգիստը գտնուող անգլիական նաւատորմին հրամանատարին ու բարձրաստիճան սպայից։ Ներկայ գտնուեր են նաև Կրետէի անգլիական հիւպատոսն ինչպէս նաև օսմանեան նաւային բարձրաստիճան սպայք։ Հացկերոյթը տեւեր է մինչեւ գիշերուան ժամ 4 ու կէս եւ զինուորական նուագածուաց խումբ մը նուագեր է։ Սեղանին ներկայ գտնուողները բարեմաղթութիւններ ըրած են վասն կենաց Վեհ. Սուլթանին։

ԼԻԲԱՆԱՆՈՒ կառավարիչ Նաում փաշա Պէյրութ գնացեր է ուր պիտի անցընէ ձմրան եղանակը և հիւրընկալուեր է կուսակալ Խալիտ պէյի կողմէ։ Լիբանանու ժողովուրդը գոհ է եղեր Նաում փաշայի ձեռք առած միջոցներէն, գլխաւորաբար նահանգին վարչական ժողովոյ փոփոխութենէն։

ԱՓԻՈՆԻ մշակութիւնը, վաճառումն ու Թուրքիայէն արտածումը մենաշնորհի վերածելու առաջարկ ներկայացնող խումբին գլուխ կը գտնուին սեղանաւոր և վաճառական Յակոբ էֆ. Շէրպէթճեան և պետական պաշտօնեայ Մեհմէտ Մազհար էֆէնտի։

ԵԳԻՊՏԱԿԱՆ լրագիրներուն մէջ կը կարդանք թէ շուէտական կառավարութիւնը Վազայ պատուանշանի երրորդ աստիճանը նուիրած Վսեմ. Պօղոս փաշա Նուպարի։

ԿԱՅՍ. ԻՐԱՏԷ մը հրամայած է որ Պարսկաստան ղրկուելիք բժշկական յանձնաժողովն, որ առժամաբար ի Կարին կը գտնուի, կուսակալին նախագահութեամբ գործելով առողջապահական միջոցներն աւելցնէ և մեծ ուշադրութիւն ընէ անոնց գործադրութեանը։ Կայս. սոյն հրամանը Բարձր. Մեծ-Եպարքոսին կողմէ հաղորդուած է նոյն կուսակալութեան։

ԽԱՅՐԷՏՏԻՆ ՊԷՅԻ ԱԶԱՏՈՒՄԸ.— Սէրվէթէն կը հեռագրեն թէ առեւտրական տնօրէն ու Պօրսայի գօմիսէր Իսմայիլ պէյի քեռորդին՝ Խայրէտտին պէյ, որ Զանաքա աւազակապետին կողմէ լեռ տարուած էր, ազատուեր է, շնորհիւ ձեռք առնուած ազդու միջոցներու։

Իսմայիլ պէյ այս լուրն առնելուն անմիջապէս կայս. պալատ երթալով շնորհակալութիւն ու երախտագիտութիւն մատոյց։

ՄԱԼԻՅԷԻ մէջ երէկ յանձնաժողով մը նիստ գումարուեցաւ ընդ նախագահութեամբ Ելմտական Նախարար Վսեմ. Նազիֆ էֆէնտիի և պատրաստուելու վրայ եղող մանր արծաթ դրամներու քանակութիւնն աւելցնելու մասին խորհրդակցութիւններ կատարեց։ Յանձնաժողովը կը կազմէին Ելմտական ժողովոյ նախագահ Իպրահիմ էֆէնտի, անտառաց և հանքաց ընդհանուր տնօրէն Գույումճեան Պետրոս էֆէնտի, Րէժիի գօմիսէր Նուրի պէյ, արքունի փողերանոցին տնօրէն Քեամիլ էֆէնտի, Օսմ. Պանքայի տնօրէն Պ. Լաֆիւանդ, Րէժիի տնօրէն Պ. Ֆօրնի և Հանրային Պարտուց վարչական ժողովոյ աւստրիական պատուիրակ Պ. Բրինիք։

Ի ՎԵՆԵՏԻԿ անցեալ տարի գումարեալ առողջապահական համաժողովին որոշումները պարունակող տեղեկագիր մը, զոր պատրաստած են նոյն համաժողովին իբրեւ օսմանեան պատուիրակ ներկայ գտնուող Հաճի Արիֆ պէյ՝ գեր-նախագահ առողջապահական ժողովոյ և միւս պաշտօնեայք, Նախարարաց Խորհրդոյ կողմէ նկատողութեան առնուելէ յետոյ ի կայս. պալատ ղրկուած են Վեհ. Սուլթանին մատուցնելու համար։

ԵՐԿԱԹՈՒՂԻՔ.— Նախարարաց Խորհուրդն իւր կիրակի օրուան նստին մէջ կրկին անգամ նկատողութեան պիտի առնու Պ. Քազուլի ծրագիրն ի մասին Էսկիշէհր-Գօնիաի և Էնկիւրի-Կեսարիոյ երկաթուղեաց շինութեանց, և յետոյ իւր տեղեկագիրը պիտի մատուցանէ Վեհ. Սուլթանին։

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ վերատեսչութիւնը տեղեկանալով որ մայրաքաղաքս հասած նամակներէն ոմանք փոխանակ ուղղակի իրենց տէրերուն ղրկուելու, անուշադրութեամբ ուրիշ տեղերու նամակատուները կը ղրկուին և հոն նամակներու տէրերը չգտնուելով՝ ասա կը վերադարձուին, որով յապաղումներ տեղի կունենան, պաշտօն յանձնած է նոյն վերատեսչութեան քննիչ Մեհմէտ Ալի պէյի, որ քննութիւն մը կատարէ և այդ յապաղմանց պատճառ եղող պաշտօնեաները խիստ պատասխանատուութեան ենթարկէ։ Մեհմէտ Ալի պէյ, կըսէ Սապահ, հարկ եղած քննութիւնները կատարելով հաստատած է թէ Ղալաթիոյ նամակատան պաշտօնեաներէն ոմանք պատասխանատու են այդ յապաղմանց։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐՔ.— Մաքսային վերատեսչութիւնը ծանուցած է արտաքին գործոց նախարարութեան, թէ Ռումանիոյ հետ առեւտրական դաշնագրոյ մը բանակցութիւնները կատարելու համար ամեն պաշտօնագիրք պատրաստ են։ Հետեւաբար, երկու պետութեանց պատուիրակները կրնան բանակցութեան սկսիլ։

ՕՁԻՐՔ ԵՒ ԱՐԿԱԾՔ.— Երէկ իրիկուն ի Պոլիս Վալիտէ խանի դրան առջեւ Ալի և Մեհմէտ անուն երկու պարսիկներ կռուի բռնուելով Ալի դաշոյնով վիրաւորեց իւր հակառակորդը։ Մեհմէտ առած վէրքէն մեռաւ և Ալի ձերբակալուեցաւ։

—Հեռագրական տեղեկութեան մը համաձայն, «Տիքավիս» անուն հելլենական փոքր շոգենաւ մը, որ նախընթաց օր մայրաքաղաքէս մեկնած էր, երէկ առաւօտ ի Տարտանէլ ժամանելուն գլխու կողմի ամբարանոցէն հրդեհ ծագեր և թէեւ շատ աշխատուեր է, սակայն մեծ մասն այրեր է։

—Անցեալ շաբաթ օր ի Տարտանէլ փոքր առագաստանաւ մը փոթորիկէ բռնուելով ընկղմեր և նաւապետն ու նաւաստիք խեղդուեր են։ Նոյն օրն ուրիշ փոքր նաւ մը ևս ընկղմեր է, սակայն նաւապետն ու նաւաստիներն ազատուեր են։

—Երեքշաբթի իրիկուն Սկիւտարէն Գատը գիւղ գնացող հայ մը Հայտար Փաշայի հիւանդանոցին առջեւ ոտքը սահելով գետինն ինկեր ու սրունքը կոտրեր է։ Անատոլուի երկաթուղեաց ընկերութեան դրանապան Րիֆաթ էֆէնտի, որ նոյն պահուն անկէ կ'անցնէր, մարդուն աղաղակներն իմացեր և օգնութեան փութալով կառքի մը մէջ դնելով տունը ղրկեր է։

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ.— Բերայի պատժական ատեանն երէկ դատեց Հիւսէյին անուն այն պարսիկ խաբեբան, որուն չահատակութիւնները պատմեցինք նախորդ թուով մը։ Հիւսէյին դատապարտուեցաւ չորս ամսոյ բանտարկութեան եւ երկու ոսկւոյ տուգանաց հատուցման։

ՆԱՒԱՀԱՆԳՍՏԻ վերատեսուչ Տիլավէր փաշա, որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, բոլորովին ապաքինած է։ Ն. Վսեմութիւն երէկ բժշկաց արտօնութեամբ պտոյտ մը կատարեց Բերայի ու Շիշլիի կողմերը։

ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ որոշած է դրոշմել (տամղա) այն ժամացոյցներն զորս ջրի ու կազի ընկերութիւնները տուներու եւ այլ շէնքերու մէջ կը դնեն՝ սպառուած ջուրին կամ կազին քանակութիւնն որոշելու համար։

ԹՈՐՓԻՏՕ.— Կայս. կառավարութեան հաշւոյն ի Գերմանիա յանձնարարեալ Թորփիտօներէ 9 թիւ Թօրփիտօն Կ. Պոլսոյ նաւահանգիստը ժամանած է։ Այդ Թօրփիտօն 39 մետր երկայնութիւն եւ ութ մետր լայնութիւն ունի ինչպէս նաեւ հազար ձիու ույժ ունեցող մեքենայ մը։ Արագութիւնն է ժամը 22 մղոն։ Երկու աշտարակներ ունի, որոց վրայ փոքր տրամագծով երկու թնդանօթներ դրուած են։

ԴԱՐԱՒԵՐՁԻԿ ԳՈՂԵՐ.— Անցեալ չորեքշաբթի գիշեր, ժամն երկուքին ատեններ, գլխարկաւոր երկու չեք երիտասարդներ որք յունարէն կը խօսակցէին, կը ներկայանան Թաքսիմ մօտ, Շիշլի փողոցը, Տքթ. Սիմոնոֆին տունն, ու տրտում երեսոյթով կը յայտնեն թէ իրենց Քալիոնճը գուլուք կը բնակին, թէ ծանր հիւանդ մը ունին որ վտանգաւոր կացութեան մէջ է, և կը խնդրեն տոքթորէն որ հաճի իրենց ընկերանալ հիւանդին մօտ։ Տքթ. Սիմոնոֆ, իր արուեստին պահանջումով, կը փութայ այդ պարոններուն խնդիրքը կատարել, և կը հետեւի անոնց մինչեւ Սիլլողոս փողոցը։

Երկու երիտասարդները մինչեւ այդ փողոցը կը հետեւէին տոքթորին, իրենց վիզերին մէջ թաղուած կերպարանքով։ Բայց յանկարծ, այդ փողոցն հասնելնուն, երիտասարդներէ մին մէկէնմէկ տոքթորին վրայ կը յարձակի և կուզէ կողոպտել զայն։ Բարեբախտաբար, տոքթորը չի կորսնցուներ իր պաղարիւնը և բռնելով այդ աներես սրիկան, շնորհքով մը կը տփէ, եւ երկուքն ալ ձերբակալելու համար կը յարձակի միւսին վրայ եւս որ, ափիբերան եղած, իր ընկերին ընդունած կռուփի հարուածները կը դիտէր։ Բայց այդ պահուն երկու անճարակ գողերը կը յաջողին կծիկը դնել, այսպէս լաւ դաս մը առնելէ ետքը։

ՓՈԹՈՐԻԿ.— Անցեալ օրուան փոթորիկէն պատճառած վնասներուն վրայ հետեւեալ տեղեկութիւնք եւս առնուած են.

Սկիւտարի մէջ Ատանայի Նախկին կուսակալ վախճանեալ Զիհա փաշայի որդւոյն՝ Վահիտ պէյի տան մէկ մասը փլած է հովին սաստկութենէն։

—Սկիւտարի մէջ Տէօքմէճի Ահմէտ էֆէնտիի խանութը փլեր է, սակայն մարդու կորուստ չէ պատահեր, որովհետեւ գործաւորք անմիջապէս դուրս նետուեր են։

—Պուրկազ կղզւոյն առջեւ յարդ բեռցած նաւ մը ցամաքին զարնուելով խորտակուեր եւ ընկղմեր է, սակայն մարդու կորուստ չէ պատահեր։

—Ի Ֆէնէր յունաց վարժարանի հին շէնքին վրայ կայծակ իյնելով՝ մէկ քանի տեղերը վնասեր է։

—Երկուշաբթի գիշեր, Ոսկեղջիւրի 3 ու 4 թիւ շոգենաւերն, որք Խալըճը Օղլուի նաւամատոյցին կապուած էին, հովին սաստկութենէն պարանները խզուեր և շոգենաւերը մինչեւ Բիրի Փաշա քշուեր են ուր ծովու քաղնիքին զարնուելով բաւական վնասներ են։ Շոգենաւին նաւաստիք անմիջապէս երկաթ նետելով վտանգին առաջքն առեր են։

—Էյյուպի մէջ տան մը ծխնելոյզը փլեր է։ Ի Գումգաբու խոշոր նոճի մը արմատախիլ ըլլալով պատի մը վրայ ինկեր եւ պատը փլեր է։

—Կղզիներու մէջ պատեր ու տնակներ փլեր են, սակայն մարդու կորուստ չէ պատահեր։

ԱՄՍԱԹՈՇԱԿ.— Սուրիոյ նախորդ կուսակալ վախճանեալ Մուսթաֆա Ասըմ փաշայի կնոջն ու աղջկանը 3539 ղրուշ ամսաթոշակ յատկացուած է։

ԿԱՄՈՒՐՋ.— Վեհ. Սուլթանի առաջին սենեկապետ Վսեմ. Հաճի Ալի պէյ կամուրջ մը շինել տուած է Գօնիաի Ազասբայ գաւառակին մէջ։ Այդ կամուրջին բացումը տեղի ունեցեր է ի ներկայութեան կառավարական պաշտօնէից ու այլոց եւ բարեմաղթութիւնք եղած են վասն կենաց Վեհ. Սուլթանին։

ՖՈՒԹՕԼՕ Մանկօ ընկերութեան «Ռօնտըլֆըն» շոգենաւը, որ Աղեքսանդրիայէն կուգար Օտեսա ուղեւորելու համար, խրեր է ի Տարտանէլ, Մեճիտիյէ-Բայէ կոչուած ծովեզերին մօտ։ Նաւաձիգ շոգենաւեր կ'աշխատին անոր ազատման։

ԹԵՎՖԻԳ ՓԱՇԱ, վերատեսուչ քաղաքային պաշտօնէից հանգստեան թոշակի սնտուկին, հիւանդ ըլլալով մէկ քանի օրէ ի վեր իւր պաշտօնատեղին չերթար։

ԳՈՐԾԱՐԱՆՔ.— Ձեռնհաս իշխանութիւնն որոշած է վիճակագրութիւն մը պատրաստել մայրաքաղաքիս ու արուարձանացը մէջ գտնուած գործարաններուն, նշանակելով անոնց իւրաքանչիւրին տէրերուն անունը, արտօնագիր ունենալը կամ չունենալը, ինչ պատրաստելնին եւն։ Արդ վիճակագրութեան պատրաստութիւնը յանձնուած է Քաղաքապետութեան երկրաչափներէն Ասաֆ պէյի և Նաֆիաի երկրաչափներէն Զէրքէսեան էֆէնտիի։

ԱՆԱԿՆԿԱԼ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ.— Անցեալ օր այս խորագրով պատմեցինք տասնեհինգամեայ յոյն աղջկան մը տարօրինակ ամուսնութիւնն Վէռոնիքի անուն երիտասարդի մը հետ։ «Նէօլոգոս» այս մասին կը հաղորդէ հետեւեալ մանրամասնութիւնները.

Պ. Վէռոնիքի 28 տարեկան է, եւ իր հայրը Աթէնքի մէջ ծանօթ փաստաբան մըն է։ Երկու ամսէ ի վեր միայն Պոլիս կը գտնուի։ Կարտիրինա և Աղեքսանդրա Եորկիատիս իրենց առեւանգումէն յետոյ, Պ. Վէռոնիքիի առաջնորդութեամբ գացին տիկին Մավրօքօրտադոյի տունը, Բանկալթի, ուր կը գտնուէր քահանայ մը պսակի արարողութիւնը կատարելու համար։ Սէվասթէօփուլօ, որ աղջիկներուն խնամակալն է, հիւպատոսարանին առջեւ իսկոյն դատ բացաւ ամուսնութեան չգոյութիւնը վճռել տալու համար։ Դատն այսօր պիտի սկսի նայուիլ։

«Նէօլոգոս» կը յաւելու թէ այժմէն կարելի չէ հաւաստել թէ դատարանը այդ ամուսնութիւնը պիտի ջնջէ, բայց, կրօնապէս, վաւերական պիտի նկատուի, ըստ որում եկեղեցականի մը ձեռամբ պսակը կատարուեցաւ։ Բայց այս ճշմարիտ է թէ Պատրիարքարանի կողմէ ամուսնութեան հրամանագիր տրուած չէ։

Գալով փոքր աղջկան, օրիորդ Աղեքսանդրայի որ տիկին Մավրօքօրտաթօյի տունը մնացեր էր, խնամակալը ուզեր է անկէ առնել զայն։ Չորեքշաբթի մարդ ղրկեցին աղջիկն ուզելու համար, բայց այս խեղճ աղջիկը, կա՛մ վախէն կամ ուրիշ պատճառաւ, հիւանդացաւ։ Հիւպատոսարանը բժիշկներու մասնախումբ մը ղրկեց, որ ապահովեց թէ հիւանդին տեղափոխութիւնը կրնար կատարուիլ առանց վտանգի։ Բժիշկներուն այս տեղեկագրին վրայ, հիւպատոսարանը բարապաններ ղրկեց որ աղջիկը առնեն տանին։ Նորապսակ ամուսինը Պ. Վէրոնիքի այն ատեն կը միջամտէ և կ'ըսէ թէ կ'ընդդիմանայ անոր տեղափոխման։ Այս հակառակութիւնը դադրեցնելու համար, Հիւպատոսարանը ստիպուեցաւ ոստիկաններ ղրկել որք հիւանդը կառքի մը մէջ դնելով տարին զինքը իր խնամակալին տունը։

Երկու օրիորդներն ունին մօտ երկու միլիոն փրանքի հարստութիւն զոր հայրերնին իրենց ժառանգութիւն թողած է։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ

Այս գիշեր, Բերայի Վէրտի թատրոնին մէջ, Մնակեան եւ Իսմայիլ էֆէնտիներու օսմ. խումբը կը ներկայացնէ 841, առաւ՝ ինն արարուածով եւ ծիծաղաշարժ զաւեշտ մը։ Գներն յոյժ չափաւոր։ Ներկայացումը պիտի սկսի ժամ 3ին։

* * *

Վաղը գիշեր, նոյն խումբը Պոլսոյ Շահզատէ Պաշըի թատրոնին մէջ պիտի ներկայացնէ, թուրքերէն լեզուաւ, ԼԱ ՊԷԼ ԷԼԷՆ հանրածանօթ օբէռադօմիքն, ի նպաստ խումբին թէնօռ Ստեփան էֆ. Ակայեանի։

* * *

Կիրակի ցերեկ, մեծ նուագահանդէս Գերմանիոյ դեսպանատան մէջ, ի նպաստ Համազգային Անկելանոցին, դեսպան Ռատօլինքի իշխանին հովանաւորութեան ներքեւ։ Ցայտագիրն հրատարակած ենք արդէն։ Առաջնակարգ արուեստագէտներ ու քանի մը տիկնայք անձնուիրաբար պիտի մասնակցին սոյն նուագահանդէսին։ Մուտք մէկ օսմ. ոսկի։

* * *

Սիւք-Թուանիէր հետզհետէ յաջողութիւն կը գտնէ՝ իր եզական ու զուարճալի ներկայացումներովը որք կը տրուին ամեն գիշեր։ Կիրակնօրեայ ներկայացումներն սկսած են արդէն, ի դիւրութիւն գիւղաբնակ անձանց։

ՀԵՌԱԳԻՐ

ՓԱՐԻԶ, 7 Դեկտ.— Պ. Ժամէ կը մնայ գաղթային խորհրդականի պաշտօնին մէջ։ Կրօնային գործոց տեսչութիւնը դատական նախարարութենէն զատուելով կրթական նախարարութեան կցուեցաւ։

ՊԷԼԿՐԱՏ.— Պ. Ռըշօ, Փարիզի իրաւագիտական վարժարանի դասախօս, ի պատասխանի ռուման կառավարութեան, որ Զապպայի կտակային խնդրոյն վրայ իւր կարծիքն հարցուցած էր, տեղեկագիր մը ղրկեց, որով իրաւունք կուտայ Ռումանիոյ կառավարութեան և կը մերժէ Յունաստանի պահանջումները։ (Ինչպէս յայտնի է, Ռումանիոյ պահանջումն է որ խնդիրը ռումանական դատարանաց առջեւ պէտք է որոշուի։)

ԼՈՆՏՈՆ.— Նախարարութիւնը թեթեւցուց նիւթական պայմանները՝ բարեգործական հաստատութեանց վարիչ անդամներու ընտրութեան մասին։ Այսուհետեւ այս պաշտօններ առանձնաշնորհեալ դասուց սեփականութիւն պիտի չըլլան, այլ միջին կարգի համեստ մարդոց առջեւ ալ բաց պիտի ըլլան, որք շահ ունին մօտէն հսկելու որպէս զի պաշտօնական բարեգործութիւնն անխտիր և արդար ձեւով մը ի գործ դրուի իւրաքանչիւր թաղի կամ շրջանակի մէջ։

ՍՈՖԻԱ.— Գերմանիոյ ընդհանուր հիւպատոսն, (որ միանգամայն ռուսահպատակաց շահերը կը պաշտպանէ իբրեւ տեղակալ ռուս ընդհանուր հիւպատոսի,) ի մօտոյ պիտի մեկնի կարճատեւ արձակուրդով մը։

ԹԱՆՃԷՐ.— Ֆրանսական դեսպանն Ուազանի երկրին նկատմամբ քաղաքական կարեւորութիւն ունեցող առաջարկներ ըրած է Մարոքի վեհապետին։ (Ուազանի ցեղապետ իշխանն, որ անցեալները մեռաւ, Ֆրանսայի բարեկամ կը համարուէր։)

ՄԱՏՐԻՏ.— Պ. Քասթիլյոյի դահլիճն հրաժարեցաւ։ Պ. Սակասթայի ազատական դահլիճին կազմութեան կ'սպասուի։

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆՔԱՅԻՆ

Անգլիոյ Պանքային երէկ հինգշաբթի (8 դեկտեմ.) հրատարակեալ շաբաթական հաշուեկշիռն հետեւեալ տարբերութիւնները կը ցուցնէ, բաղդատմամբ անցեալ շաբթուան։

Պատրաստ մետաղադրամէն պակսած է 213 հազար անգլ. ոսկի։

Պանքատոմսերու պահեստին վրայ աւելցած է 117 հազար ոսկի։

Գանձերի փոխանակագրաց և այլ առեւտրական թղթոց մթերքին վրայ աւելցած է 196 հազար անգլ. ոսկի։

Հետեւապէս, Անգլիոյ Պանքային դիրքը վերջին եօթնեկին մէջ մեծ տարբերութիւն մը չի ցուցներ, քանի որ իւր պահեստք այժմ այնպէս կը համեմատին իւր յանձնառութեանց ինչպէս $47^{11}/_{32}$ կը համեմատի առ հարիւր։ Նախորդ շաբթուան համեմատութիւնն էր $47^{9}/_{16}$ առ հարիւր։

Այս պայմանաց մէջ, Անգլիոյ Պանքային Տնօրէն խորհուրդն իր երէկի հինգշաբթի աւուր նստին մէջ որոշեց զեղչի սակը 100ին 3 պահել։

Սակարան

ՂԱԼԱԹԻԱ, 27 Նոյեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ		110 1/8
3 » Փարիզի	»	22 82 1/2

ՕՍՄԱՆԵԱՆ ՔՕՆՍՕԼԻՏԷ

Երէկ երեկոյ զոց. [Միաց. Դ. Սէրի]		23 34
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	23 36
Կէս օրին		23 36
Թահվիլաթը Օսմանիյէ երէկ երեկոյ		82 20
» ժամ 5ին		— —

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Փոխառ. Թիւն	Սէրի	55 1/4
»	»	31 1/4
»	»	24 04

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	5 10
Քրէտի Ժէնէրալ	» »	8 05
Պանք տը Քօնս.	» »	5
Ծխ. Շանժ է վալէօր	» »	4 26
Րէժի	» »	16 10
Թրամուէյ	» »	627
Ռումէլիի երկաթուղի	Ֆր.	91 1/2
Բամպեթուղթ Լաւրիոնի		80

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանքնոց	»	88
Անգլիական ոսկի	»	110 28
Մարք Գերմանական ոսկի]	»	107 20
Իմբէրիալ	»	90
Քրիմիզ	»	51 20
Ռուբլ Թղթադրամ	»	9 16
Մեծ. արծաթ [տարբ.]	»	107 30
Մանր արծաթ	»	103
Մէթալիք	»	98
Թաաֆիյէ	»	— —
Տոկոս Ղալաթիոյ Սակարանի	»	6

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՕՐՍԱ

ՓԱՐԻԶ, 8 Դեկտեմբեր

Ֆրանսական Ռանթ 3 %	100 02 1/2
» » 4 1/2 %	105 32 1/2
Օսմանեան քոնսօլիտէ Սէրի Դ.	21 75
Օսմ. մաքս. արժեթուղթ	477 50
Բրիօրիթէ Թիւրք (1890)	432 50
Օսմանեան Երկաթուղի	90 87 1/2
» Րէժիի բաժնեթուղթ	367 50
Պանք Օթօման	596 25
Քրէտի Լիոնէ	783 75
Իտալական Ռանթ 5 %	93 72 1/2
Եգիպտական միացեալ	496 25
Չէք Լոնտրայի վրայ	25 15
Օսմանիյէ Օսմանեան քոնսօլիտէ)	375 62 1/2

ԼՈՆՏՐԱ, 8

Անգլ. քոնսօլիտէ	97 37
Օսմ. » Սէրի Դ.	21 50
» » » Ա.	55 1/4
» » » Բ.	31 1/4
» » » Գ.	22
Օսմ. փոխառութիւն 1871	96 1/4
Փոխառութիւն 1877 (Տէֆանս Լոն)	93 1/4
Պանք Օթօման	13 3/4
Այտընի երկաթուղի	18 7/8
Դասապայի երկաթուղի	11 1/2
Եգիպտական միացեալ (ունիֆիյէ)	98 3/4
» առանձ. (բրիվիլէժիէ) 1890	103 1/4
Տօմանիալ (փոխառ. Ռոշիլտ)	103
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 324

ՊԵՐԼԻՆ, 8

Օսմանեան Երկաթուղի	91 10
Օսմ. Րէժի	181
փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 225
» Փարիզի »	80 60

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

ԲԱՐԻԶ, 8

Ֆրանսական Ռանթ 3 %	100 13

Եգիպտական միացեալ	496	25
Օսմ. քօնսօլիտէ Սէրի Դ.	21	85
Օսմ. երկաթուղի	91	
Օսմ. Ռէժի	367	50
Օսմ. մաքս. արժեթուղթ	477	50
Բրիօրիթէ Թիւրք	433	75
Պանք Օթօման	397	50
Օսմանիյէ	—	—

ՌՈՒՍԱՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՔ

ՏԱՐԱԶ շաբաթաթերթն իր նոյեմբեր 25ի թուոյն մէջ կը հրատարակէ Թիֆլիզի առաջնակարգ դերասան՝ կատակերգակ Գ. Գէորգ Տէր-Զաքարեան Տէր-Դաւթեանի պատկերն, հանդերձ կենսագրական հետեւեալ ծանօթութիւններով, նորա բեմական գործունէութեան 25 ամեայ յոբելեանին առթիւ։

Մեր տեղական թատրոնական ոյժերից, իր տաղանդի՝ կարելի եղած՝ կատարեալ զարգացման և բեմական գործունէութեան ամբողջութեան հասաւ համարեա մի միայն, այս շնորհալի եւ բեմին խսպառ նուիրուած և հաւատարիմ դերասանը. այո՛, նա միակ դերասանն է, որ իր կեանքի ծաղիկ և արբուն հասակը բոլորովին նուիրել է Մելպոմենայի տաճարին։

Կոմիկ Գէորգ Տէր-Դաւթեան բուն Թիֆլիսեցի է, որդի Հաւլաբարի Ս. Մինաս եկեղեցու քահանայ Տէր-Զաքարի. ծնւել է 1850 թւին, օգոստոսի 25 ին, ուսումն առել է Ներսիսեան դպրանոցում։

Բեմ դուրս է եկել առաջին անգամ 1870 թւին, քսան տարեկան հասակում, մասնակցելով [illegible] կատակերգութեան մէջ, Սարուխանի դերում, այն ժամանակւայ քաղաքային թատրոնում, որ այժմ յայտնի է Թամամշեան Քարւանսարայ անունով։

Հէնց առաջին ներկայացումներից յետոյ՝ նա թատրոնական ղեկավարների ուշադրութիւնը և հասարակութեան սէրը միանգամայն գրաւեց։ Այնուհետեւ նա, ահա ամբողջ 22 տարի է, որ միշտ թատերաբեմի փայլն է եղել, որ չի խամրել այնպիսի նշանաւոր ասողերի առաջ, ինչպէս են Ադամեան, Մնակեան, և այլք, այլ և մրցել է նրանց հետ ու նշանաւոր է եղել նրանց ժամանակ ոչ պակաս նրանցից։

Գ. Գէորգ Տէր-Դաւթեան օտարագի և հայ յայտնի պիէսներում մասնակցել է, անմոռաց և կրթիչ ու բերկրալի տպաւորութիւն գործելով հասարակութեան վրայ։

Տէր-Դաւթեան արժանացել է նոյն իսկ աշխարհահռչակ Ռօսսիի սրտագին գրաւոյն և հիացման։

Զենք կարող ասել, որ հայ հասարակութիւնը պէտք եղած կերպով երախտապարտ եղած լինի այս հեզ, անդուլ, ջանասէր, բեմին անձնուէր, տաղանդաւոր դերասանին։

Սակայն մեծայոյս ենք, որ հայերն իրանց այդ սեպուհ պարտաւորութիւնը պիտի կատարեն անշուշտ նրա մօտաւոր բեմական քսանհինգամեայ յոբելեանին։

Գ. Գէորգ Տէր-Դաւթեանն իր մասնաւոր կեանքում վարում է բանկի հաշուապահի օգնականի պաշտօն։

ԲԱՐԻԶՈՒ ԳՐԱՏՈՒՆԸ

Ի Գաղղիա, Արքունական Գրատան մը առաջին գաղափարն եւ ծրագիրն Ս. Լուդովիկոսի ժամանակէն կը սկսի (1226—1270)։ Մինչեւ նոյն ատեն երկրին մէջ գտնուած գրեանք՝ բազմաթիւ վանօրէից մէջ կը պահուէին. այս գրոց մեծամասնութիւնը կը կազմէին Ս. Գիրք, Ս. Հարց գրուածք, կանոնական գրութիւնք, պատարագամատոյց և մաշտոցք, և սակաւաթիւ լատին և յոյն հեղինակաց ձեռագիրք։ Սուրբն Լուդովիկոս այս ամէն գրքերն օրինակել տուաւ, և ի Բարիզ առանձին տեղ մը հաւաքել զանոնք. բայց իւր մահուընէն վերջը՝ այս գրեանք ալ ցրուեցան դարձեալ յայլ և այլ մենաստանս, որոց կտակեր էր նախընթացաբար։ Ցազգային Գրատանն այս ժամանակէս միայն պատարագամատոյց մը մնացած է՝ 33 մեծ և գրեթէ 100 փոքր զարդանկարով։

Կարոլոս Ե. առաջինն եղաւ որ բուն գրատուն մը հաստատեց. Լուվրի աշտարակաց միոյն մէջ 1200 հատոր ժողվեց, որոց մեծ մասը պատկերազարդ պատարագամատոյցներ և այլ կրօնական գրուածներ, սրբոց վարքեր և առասպելախառն պատմութիւններ, հմայութեան և աստեղագիտութեան վերաբերեալ գրքեր էին։ Նոյն գրատան քարտուղարն Ժիլ Մալէ՝ ցանկ մը շինեց և որպէս զի գրասէրք ու և իցէ ժամու օգուտ կարենան քաղել այս գրատունէն՝ միշտ արծաթեայ կանթեղ մը կը վառուէր անդ։ Սակայն այս թանկագին և կարեւոր հաւաքումը ցրուեցաւ դարձեալ Կարոլոս Զ. ի ժամանակ, և այսօրուան օրս միայն հինգ կամ վեց հատոր մնացեր են անկէ. իսկ տ'Անժուի և Պէրրիի դքսերն՝ իրենց սեպհական դղեկաց մէջ մեծ գրատուններ հաստատեցին, որոց գրեանք յետոյ ճոխացուցին արքունական Մատենադարանը։

Կարոլոս Ը. բերաւ իրեն հետ Իտալիայէն բազմաթիւ յարգի գրչագիրներ, և Լուդովիկոս ԺԲ. իւր գրատունն ի Պլուա փոխադրեց, աւելցնելով վրան Սֆորցա և Փաւիոյ Վիսքոնդի ընտանեաց մատենադարանաց գրեանք. Փեդրարքայի և Լուի տը Պրիւժի, որ ժամանակին ամենէն աւելի հարուստ գրատանց մին էր, թանկագին ձեռագրերով. իւր ժամանակ՝ Յովհաննէս Պուրտիշօն շարադրեց իւր գլուխ գործոցն, որ ցարդ կը պահուի յԱզգային Մատենադարանին, այսինքն Պրըթանիի Աննա թագուհւոյն համար շինած հռչակաւոր [illegible] գիրքը։

Տպագրութեան գիւտը՝ մատենադարանաց ամենամեծ զարգացում պատճառեց. և յիրաւի կը հաշուեն որ գիւտին տարիէն սկսեալ ցամ 1500 յեւրոպա հինգ միլիոն հատոր գիրք տպագրուեցաւ։

1544 ին Փրանկիսկոս Ա. ի Ֆոնդէնպլօ փոխադրել տուաւ Յովհաննէս Բարեսոտին և Կարոլոս տ'Անկուլէմի հաւաքած գրեանքն, որոց վրայ յետոյ յաւելան Պլուա և Մուլէն դղեկաց մէջ գտնուած հաւաքմունք։ Այն ժամանակէն սկսեալ ամէն աստիճանէ ուսումնասէրք կ'ընդունուէին ի մատենադարան։

Հէնրիկոս Բ. (1547—1559) մասնաւոր սէր մ'ունենալով փառակազմ գըրեանց՝ 800 հատորէ աւելի կազմել տըւաւ, յորոց ամենն ալ իբր օրինակ կրնան համարուիլ վայելչութեան եւ ընտիր ճաշակի. իր յաջորդները մատենադարանին վրայ բնաւ սէր չունեցան, ուստի Կարոլոս Թ. ի ժամանակ ի Ֆոնդէնպլոյէ փոխադրուեցաւ ի Բարիզ։ Լոդովիկոս ԺԴ. Փիլիպպոս Նիւրոլ Շարդրի եպիսկոպոսէն 500 հատոր գնեց. և Մատենադարանն կը պարունակէր 16,746 հատոր. այն ժամանակ մեծ գըրատունն հաստատուեցաւ Լա Հարբ փողոցը։ Արքունական գրատունը՝ քիչ վերջը «Լուվրի Մատենադարան» կոչուեցաւ։ Լուդովիկոս ԺԴ. գրոց կարեւոր գնումներ կատարեց, այնպէս որ մատենից թիւը 70,000 հատորի բարձրացուց, և Քոլպէր 1666 ին Վիվիէն փողոցին մէջ երկու տուն գնեց զանոնք զետեղելու համար։

Ութեւտասներորդ դարուն թէ ձեռագրաց և թէ գրոց թիւն շատ աճեցաւ. օրինակի համար, 1732 ին Քոլպէրի հաւաքումը գնուեցաւ, որ 6000 ձեռագրէ աւելի կը բովանդակէր. տասնուհինգ տարի առաջ Կարոլոս տ'Օզիէ Մարդէն մատենադարանին նուիրեր էր իւր «Ծիւղագրական գրատունը» որ շատ հարուստ հաւաքում մ'էր։ Օրլէանի դքսին օրով, գրատունը ցայսօր գտնուած տեղը փոխադրուեցաւ, որ առաջ Մազարէն կարտինալին ստացուածն էր։

Մինչեւ այն ատեն գրատունը հարստացեր էր գնմամբ, ընծաներով եւ փոխանակութեամբ. 1789 ին, վանօրէից և այլ կրօնական հաստատութեանց մատենադարանաց գրքերով մեծապէս հարստացաւ. Սակայն ցաւալի է ըսել որ այս փոխադրութեան ժամանակ ամենէն գեղեցիկ կազմերը փճացան, ամենէն աւելի յարգի ձեռագիրները պատռուեցան, այնպէս որ 1794 ին օրէնք մը հրատարակեցաւ գրոց և արուեստական գործոց պահպանումը տրամադրող։

Ներկայ դարուս մէջ՝ մեծ գրատան կից Շերէն և տ'Օզիէ երկու տենեակներ աւելցան, և Լապըրտուայեռի հաւաքումը, 100,000 հատոր։ Իսկ վերջի տարիներուս ամենէն աւելի թանկագին գնմանց մին է Աշպուրնամի հաւաքումը։

1855 ին Բարիզու Ազգային մատենադարանը ընդ գրեանս եւ փոքր հրատարակութիւնս գրեթէ երկու միլիոն հատոր ունէր. Ներկայիս միայն գրոց թիւը գրեթէ նոյնչափ է, և ամէն տարի 50,000 հատոր կ'աւելնայ։

Գաւառական լուրեր

ՍԵԲԱՍՏԻԱ, 7 Նոյեմբեր

Արժ. Յովսէփ Ծ. Վարդապետ Այվազեան Պոլիս վերադարձած պահուն քաղաքս հանդիպելով Առաջնորդ Ս. Հօր հրամանաւ Ս. Պատարագ մատոյց տեղւոյս Մայր եկեղեցւոյ մէջ եւ իւր հոգեշունչ ու խանդավառ քարոզով՝ որոյ բնաբանն էր «Խաչը» մխիթարեց ժողովրդեան այն յոգնախուռն բազմութիւնը, որ ներկայ էր։ Տեղւոյս կրթական վիճակին ակնարկելով՝ յորդորեց ժողովուրդը որ սիրով փարին իրենց վարժարաններուն և անոնց յառաջացման համար համերաշխաբար աշխատին ու հեռու պահեն իրենց զաւակներն օտար վարժարաններէն։ Հայր Այվազեան վերջ տուաւ իւր հակիրճ այլ հոգեպարար քարոզին՝ բարեմաղթութիւններ ընելով լուսամիտ Օգոստափառ Կայսեր թանկագին կենաց և արեւշատութեան համար և ժողովուրդը մասնակցեցաւ սրտաբուղխ «ամէն»ներով։

—Նոյն օր իսկ Ներսէսեան վարժարանին մէջ տեղի ունեցաւ աշակերտաց քննութիւնն ու մրցանակաբաշխութեան հանդէսն ընդ նախագահութեամբ Այվազեան Հայր Սուրբին։ Երբ կարգը կրօնագիտութեան քննութեան եկաւ, դասախօսին եւ աշակերտաց կողմանէ բարեխօսութեան և այլ կրօնական խնդրոց վրայ թիւր գաղափարներ արտայայտուեցան, որք խորապէս վըշտացուցին Նախագահ Հայր Սուրբը՝ որ ցաւ ի սիրտ եղելութիւնն յայտնեց Սրբազան Առաջնորդին։

Ինչպէս յայտնի է Աւետարանականներ անուամբ կարգ մը նորելուկ երիտասարդներ երեւան եկած են քաղաքիս մէջ որք կը նկրտին իրենց կրօնական թիւր գաղափարներն սերմանել, ու արծարծել կը յուսանք՝ թէ Առաջնորդ Ս. Հօր ջանիւք քիչ օրէն պիտի բարեփոխի մեր վարժարանաց այս վիճակը և պիտի ունենանք բանիբուն անձերէ բաղկացեալ վանական միաբանութիւն մը՝ որ ստանձնէ դպրոցներու կրօնական դասախօսութիւնն և ժողովուրդը մխիթարէ հոգեւորապէս։

—Մեզ սպառնացող համաճարակին նահանգիս մէջ մուտքն արգիլելու համար, մեր հոգատար Վեհապետին հրամանաւ՝ Վսեմ. Կուսակալին ազդու տնօրէնութեանց շնորհիւ ամեն նախազգուշութիւններ ձեռք առնուած են և առայժմ ոև է երկիւղ չկայ այս մասին։ Ո.

ԿՐՕՆՔՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Կրօնքը, այն վսեմ, գեղեցիկ և անուշ զգացումը՝ զոր Աստուած ամեն զգացումներէ առաջ արթնցուց մարդոց սրտին մէջ, միակ կարող զօրութիւնն է որ կ'իշխէ նոցա չար կրից վրայ, եւ գիտէ սանձել ու վարել զայնս միանգամայն, Աստուծոյ կամաց և բանականութեան պահանջից համաձայն։ Նա՛ այն միակ համոզիչ խրատողն է որ կը յորդորէ մեզ ապրելո՛ւ այսինքն տառապելու զօրութիւնն ունենալո՛ւ, ի վարձատրութիւն մեզ խոստանալով Երկինքը։ Կրօնքը ամեն զգացումներէ աւելի ազդեցիկ և հզօր է այնու՝ զի Աստուած իր և մարդոց մէջ հաղորդակցութեան կապ հաստատեց զայն։ Անո՛վ կը խօսինք Աստուծոյ հետ, անո՛վ կը տեսնենք զինքը մեր հոգւոյն խորոց մէջ, անո՛վ նոր իմն մխիթարութիւն կ'զգենունք, երբ մեր հոգին կը լողայ տրտմութեան անհո՜ւն ովկէանին մէջ։

Եւ ուրիշ ո՞ր զգացում կարէ շնորհել մարդուս այն գողտրիկ, զուարթ ու երջանիկ խաղաղութիւնը՝ որ մեր հոգւոյն ու մտքին վրայ կը տիրէ, երբ ծնրադիր Քրիստոսի եկեղեցւոյն վսեմ աղօթքները լսելէ, սրբոց հոգեշունչ երգերովը արբենալէ, եւ մեր սրտէն բղխած կրակոտ մաղթանքները քահանային խունկին ու աղօթքին հետ խառնելէ ետքը տուն կը դառնանք։

Ուրիշ ո՞ր զգացում կարէ մխիթարել զմարդ այն ահաւոր վայրկենին՝ յորում մահը մեր սիրելիքը յափշտակելով մեր գըրկերէն, դառնակսկիծ ցաւերու, արիւնի ու արցունքի կը մատնէ զմեզ. ո՞վ կուտայ մեզ զնոսա յերկինս տեսնելու և հոն՝ անբաժան մնալու քաղցր յոյսը. ո՞չ ապաքէն կրօնքը։

Կրօնից զգացումը գրեթէ ամեն մարդոց սրտին մէջ տեղ ունի, կան ապականեալ մարդիկ՝ որոց համար ամեն զգացում օտար է, որոց հոգին սեւցել է ամեն տեսակ մոլութեանց մէջ, սակայն ունին տեղ մը իրենց սրտին մէջ մաքուր եւ կոյս յամենայն աղտեղութեանց, հոն զետեղուած է կրօնքը. և մոլորեալ մարդը չկրնար առանց յուզման մտածել Արարչին վրայ. բերանը կուրանայ զԱն, իսկ սիրտը կը հաստատէ նորա գոյութիւնը։ Չկրնար առանց մինչեւ սրտին խորերը սարսռալու լսել եկեղեցական երգերուն վսեմ երաժշտութիւնը՝ որ Վոլդէռեան անհաւատի մ'իսկ հոգւոյն ամենախորին ծալքերը կը քրքրէ, և Աստուծոյ գոյութեան վրայ խորհիլ կուտայ անոր։

Այն տեղն՝ ուր կրօնքը պայծառ կերպիւ ցոյց կուտայ իր վեհութիւնը ու մեծավայելչութիւնը, եկեղեցի՛ն է։ Հոն՝ մարդ կզգայ Աստուծոյ հետ ըլլալը, իրա՛ւ է թէ ո՛ւր որ աղօթենք հո՛ն է Աստուած, սակայն եկեղեցւոյն մէջ աւելի մեր մօտը կզգանք զԱն, վասն զի հոն՝ իր յատուկ տան մէջն է Նա, հոն, աւելի լսելի կ'ըլլան մեր աղօթքները, հոն՝ Աստուած իր օրհնութիւնը աւելի առատօրէն կը բաշխէ մեզ։ Ուստի յաճախ պէտք է եկեղեցի երթալ, պէտք է սիրել կրօնքը ամէն բանէ աւելի, զի Նա՛ միայն ճշմարիտ, Նա՛ միայն սուրբ, Նա՛ միայն կենդանի է. եւ կրկնակի պէտք է սիրելի ըլլայ մեզ կրօնն, այնու՝ զի ոչ միայն երկնից ճամբան կը բանայ մեր առջեւ, այլ նաև բարի, առաքինի, քաղցր կացուցանելով զմեզ մեր Փրկչին պէս, այս աշխարհիս մէջ ալ խաղաղ ու երջանիկ կեանք կը շնորհէ մեզ, զի ճշմարիտ երջանկութիւնը միայն առաքինութեան մէջ կը կայանայ։

Այժմ ուրախալի է տեսնել թէ կրօնքի ու եկեղեցւոյ սէրը տարածուել է հայուհեաց մէջ։ Հայ աղջիկները մեծաւ մասամբ գրեթէ ամէն կիւրակէ կը յաճախեն եկեղեցի. սակայն հազուագիւտ բացառութեամբ դժբաղդաբար կան մայրեր՝ որք կ'արգիլեն իրենց աղջիկներն եկեղեցի երթալէ, ըսելով. «ի՞նչ է այդ ամեն կիւրակէ եկեղեցի երթալը, դուն ժամու կնի՞կ ես.» ևն. ևն։

Ի բաց վանեցէք, մայրեր, ձեր մտքէն, զայդ փտած գաղափարներ, ազատ թողէք ձեր աղջիկները եկեղեցի երթալու, թողէ՛ք որ մեր Ս. կրօնին շնորհած բերկրութիւններն ու մխիթարութիւնները վայելեն։ Անկրօն մարդիկ ինչո՞ւ միշտ տխուր և յուսահատ կըլլան, մինչեւ իսկ եթէ հարստութեան մէջ լողան, վասն զի անծանօթ է իրենց հոգւոյն այն գողտրիկ ուրախութիւնները. երկնային քաղցրութիւնները՝ զորս կրօնքը կը շնորհէ, հոգին անոնցմով կը սնանի միայն։ Ուստի այդ մարդիկ կամ իրենց ձեռքով իրենց կեանքի վերջ կուտան, զի անտանելի բեռ մը կը թուի իրենց այն, և կամ Աստուած, ի պատիժ անոնց անկրօնութեան, սոսկալի մահուամբ մը կը զարնէ զանոնք։ Օրինակները պակաս չեն։ Թող ձեր աղջիկները աւելի սիրեն Խորենացիին մեղեդին, քան եւրոպական յափշտակիչ ու կախարդիչ «օբէռա»ները։ Փոխանակ զանոնք եկեղեցիէ զրկելու «սուարէ»ներէ զրկեցէք։

Եկեղեցին աղջկան մը բարոյականը կը զտէ, սիրտն ու հոգին կը սրբացնէ, եւ Աստուծոյ երկիւղը կարթնցնէ նորա սրտին մէջ. յիշեցէք թէ «Սկիզբն իմաստութեան, Երկիւղ Տեառն.» է։

Սիրենք կրօնքը, զի ինչպէս ըսի, անմահութեան դուռը նա պիտի բանայ մեր առջեւ, սիրենք կրօնքը, զի մարդկութեան պատմութիւնը կրօնքով կսկսի եւ կրօնքով պիտի վերջանայ։

ԿԱԼԻՊՍՈՅ

ՎԵՐՋԱԼՈՅՍԸ

Երբ արեւուն յետին բոցը կը մարի
Երկինքն առած կապոյտ գոյն մը Թափանցիկ,
Միթէնշաղի նա կը դիմէ յամրաքայլ,
Մելամաղձոտ՝ զուարթ ծիծաղ չունի ալ։

Հեշտ զեփիւռ մ'է որ կ'օրօրէ շատ մեղմիւ,
Նուրբ ոստերը, սաղարթները ծառերու,
Սփոփանք մ'ալ նա կը ջանայ տալ մարդուն
Ու ամոքել անոր սրտին դառնութիւն։

Մարգ ու դալար, ծովխոտ, բլուրք ու ծործորք,
Ծաղկանց Թուփեր, Թռչունները դայլայլող,
Վշտահարած կուտան իրենց հուսկ բարեւ,
Առ մեծն աստեղց հորիզոնին, առ արեւ։

Մինչ կը տեսնես Թէ լուսինը գորշ դեղին.
Կը բարձրանայ նազելաճեմ եւ հանդարտ.
Շող մը ծառին, ցոլք մը լերան կը յղէ,
Կոհակին ալ ճառագայթ մը բիւրեղէ։

Հոն սեւաթոյր խոպոպներով կամ խարտեաշ
Աղջիկ մը կայ որ կը նայի անքըթիթ,
Գլուխն է դրած իւր գեղեցիկ ձեռքերուն.
Շողը դիտէ հառաչքով մը Թրթռուն։

Լանջքը դողդոջ, շրթունքները բացխփիկ,
Աչերը մեղկ, անշարժ կ'ըսես կը նիրհեն.
Երազ մ'ունին որ կը ծրնի լուսնին տակ,
Երազ սրտի, մրմուռանք մը ներդաշնակ։

Եւ լուսնեկին որ բարձրացած կը դիտէ,
Կը խառուի յանկարծ դէմքը փոփոխուն,
Հառաչքները, երազները աղջկան։
Ու կ'արտասուէ իւր բարձունքէն ծիածան։

ՍԻՎԱ

Աստի անտի

ԱՆԲԱԶՈՒԿ ՄԱՐԴԸ

Երեւոյթն որուն վրայ պիտի խօսինք, օրինակ մըն է այն բանին ուր կարող է մարդ հասնիլ շարունակական ու յարատեւ կռուովը։

Շիտակը մարդ բռնադատուած ըլլալու է խնդրելու համար ոտքերէն նոյն ծառայութիւններն որք կը պահանջուին ձեռքերէն, և եթէ Ինքնին այդ բանին է վիճակած, պատճառն այն է որ աշխարհ եկած է անբազուկ։

Բնութեան այս մոռացումին վրայ իր որոշումն ուրախ զուարթ տուած է և յաջողած էր իր ապրուստը ճարել անով, իբր հետաքրքրական իր մը ի ցոյց դնելով իր անձը։

Ինքն բնաւ չի տառապիր իր բազուկներուն բացակայութենէն. յաջողած է անոնց տեղը կատարելապէս լեցունել իր ոտքերով, որք արտակարգ ճարպիկութիւն մը ստացած են։

Իր ոտքերը կը գործածէ ինչպէս ուրիշ մը իր ձեռներ, Թերեւս աւելի աշխուժով։ Մէկ սենեակէն միւսը կ'երթեւեկէ, կը դարձունէ դուռներուն կղպանքը, եւ մէկ ոտքով կ'ընէ ամեն ինչ որ կարելի է ընել մէկ ձեռքով, ոտքի կենալով միւսին վրայ։ Մնաց որ ստնամաններ ալ կը կրէ զորս վեր կ'առնէ զարմանալի արագութեամբ։

Ողջունելու համար, շարժումով մը որուն սովորած է, վեր կ'առնէ գլխարկը, գլուխը կը դնէ, և ոտքը նորէն կանցունէ իր պատեանին մէջ։

[illegible]

Գ. ԿՈՒԱՆՏԷՆ

[illegible]

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

[illegible]

Տ. Զ.

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՑ ԴԱՇՆԱԿԻ
Հիմնեալ 1889 ին
Ե. ՅԱԿՈԲԵԱՆ
Բերա, Մեծ-Փողոց, Թիւ 10

[illegible]

5

ՏՕՔԹՕՐ
Գ. Թ. ՓԻԼԻՊՊԵԱՆ

[illegible]

320 11—12

ՆՈՐ ԳՐՔԵՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

[illegible] (Dictionnaire Spécial de médecine usuelle) [illegible]

45



[illegible]

ԻԼԱՆ

[illegible]

23 [illegible] 308 3—3

ԻԼԱՆ

[illegible]

Նո. 42 1—3

[illegible]

Նո. 43 1—3

PHŒNIX FIRE OFFICE

ԱՒԱԶՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

«ՖԻՆԻՔՍ»

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. Ոսկի 1,000,000

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է որոյ բաժնետէրք Անգլիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրներ են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն:

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգղ. ոսկոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար: 34

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոցս, որք ունին լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն:

Հ. ՍՈՒԻԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց Թիւ 11 և 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական թղթատան վերեւ:

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ Փրանք 8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1890 » 6,165,860
Տարեկան հասոյթ » » » » 14,135,925

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ, բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՌԱՆՔՖՕՌԹՈՒԱԶ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Փրանք 6,250,000   Պահեստի դրամ Փրանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք: Սոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է ուրիշ 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է աւելի քան 100,000,000 Փրանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, Անանիատոն խան 12, 13, 14

ԻԼԱՆ ՊԱԳԸ ՍԵՐԱՍՔԵՐԻ

Զամաշըրըճ ամէրիգան եարտա 160 պին, իլա 20.000, պէհէր եարտասը 2½ ղրշ. 3 բարա. մինտէրլիք պէզ եարտա 40.000, իլա 60 000, պէհէր եարտասը 2 ղրշ. 25 բարա.

Պէչինճի օրտուի հիւմայունի իչուն միւպայեա օլունմագ իւզրէ մահալլինճէ մէվճուտ միւնագասա գօնուլան պալատէ մուրագգամ 2 գալէմ պէզ Փիյաթը մուրագգամէսի իլէ մահալի Թալիպի էօհտէսինտէ օլուպ մէզքիւր պէզլէրին Փիյաթընը Թէնզիլ իթմէք վէ նիւմունէլէրինի կէօրմէք վէ շէրայիթը մուգարրէրէսինի անլամագ խուսուսլարինտա Թարիխը իլանտէն իթիպարէն 10 կիւնէ գատար մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ դայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր:

Նօ. 41   2—3

ԱՒԱԶՕՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Սէբէսէլ-Աէֆլէյ, Կ. Պոլսոյ և Օտեսայ մէջ

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ և ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալպանօ	2000	Ֆլամինկօ	1600	Բալէրմօ	4200
Անճէլօ	3000	Կալիլէօ	5500	Բանթէր	1700
Ապօլլօ	3500	Կիգանօ	2200	Բլաթօ	1500
Արգօ	2300	Կօզօ	1800	Բօլօ	1000
Արիօսդօ	3000	Կրանօ	2200	Քուիթօ	800
Պասսանօ	3000	Հիրօ	2000	Րիալթօ	4400
Պօրօտինօ	2200	Հիտալկօ	3000	Րինալտօ	3200
Պրավօ	2000	Հինտու	7000	Րօլլօ	3000
Գէֆֆալօ	8800	Հումպըր	1200	Րօմէօ	3500
Գէյրօ	2600	Այակօ	5000	Րօզարիօ	3500
Գալիբսօ	2500	Ճիւնօ	2300	Սալէրնօ	4000
Գամէօ	2100	Քէլսօ	2000	Սանթիակօ	6200
Գադօ	2000	Քօլբինօ	4200	Սաբֆօ	2000
Գօմօ	2700	Քօվնօ	2200	Սիլվիօ	2000
Չիգակօ	5000	Լէօ	2000	Սօրէնթօ	4300
Գիլօ	2500	Լէբանթօ	4500	Թ. Ուիլսըն	3000
Գոլըրատօ	3400	Լիվօրնօ	3000	Թասսօ	1200
Տիտօ	2500	Լիմա	1500	Թօքիօ	2800
Տօմինօ	2500	Մարէնկօ	4300	Թօրբէտօ	900
Տուրօ	4800	Մարթէլլօ	6500	Ուրպինօ	5000
Տրաքօ	2100	Միլօ	2000	Վօլթուրնօ	5000
Տայնամօ	2600	Մուրիլօ	3100	Եէտտօ	3600
Էլտօրատօ	3000	Նէրօ	2000	Զէպրա	1000
Էլէքթրօ	3200	Օրլանտօ	3000	Տէֆայընս	200
Ֆրանքօ	2600	Օթէլլօ	5000	Զէֆիրօ	200
Ֆալգօն	800	Օփօրթօ	4500	Զէրօ	140
Ֆիտօ	700	Օտտօ	2000	Մօսքիթօ	120
Էճիբշըն Մօնարք					8000
Բէրշըն Մօնարք					8000
Լըտիըն Մօնարք					8100

«Քայրօ» շոգենաւը, Նաւապետ Մաքըրմ, ընդհանուր վաճառքով Հըլէն աստ հասած, պարպած և Օտեսա ուղևորած է:

«Իակօ» շոգենաւը, Նաւապետ Ուսդըն, ընդհանուր վաճառքով Հըլէն մեկնած է ամսոյս 28ին և դեկտ. 12ին աստ կ'սպասուի:

Ուղևորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՑ ԵՒ ՈՒԻՑՕ
Գործակալք
Թիւ 17-18, Բիւյիւք Միւհէթ խան, Ղալաթիա

293

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՒՔԵԱՆ

Ն. ԲԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիոյ և Պոլսոյ միջև կանոնաւորապէս բանող

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Անտրէ:

Փարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղւոյ ուղևորութիւնն ի միասին առնլով,
Ա. կարգ 245 Փրանք
Բ. » 175 »

Ուղևորի և ապրանք ուղևորութեան

Նաւուղղէքի, ուղևորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակալաց
ԹԻՄՈԹԷ ԸՐԳՈՒԼ
Մումհանէ Սիթէ Ֆրանսէզ

5

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ԲԱՑՈՒՄՆ Ա. ՀԱԱՍ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՃԱՌԱՏԵՂՒՈՅՆ
որ ի Ղալաթիա, փողոց Վօյվօտա, Նորատունկեան խան, Թիւ 6, 7 և 8
ի 1/13 Նոյեմբերի 1892

Զանազան և ճոխ բեզայք, կանանց գլխու ծածկոցք, Սեղանի ծածկոց և անձեռոցներ, Ճերմակեղէնք, Սրփիչ, Թաշկինակ, անկողնոյ ծածկոց, Փորսէ, կանանց չալիկներ, գլխերազգեստներ, և այլ տեսակ կանանց վերաբերեալ իրեղէններ. Անուշահոտ նիւթեր և այլն և այլն:

Կը խնդրենք արգոյ հասարակութենէն այցել մեր վաճառատունն ուր հետեւեալները կը վաճառուին աժան գիներով և յոյժ նպաստաւոր պայմաններով:

ԳՈՐԾԱՐԱՆԻ ԳԻՆ   306

ՊՏՈՒՂ ԼՈՒԾՈՂ ԵՒ ԶՈՎԱՑՈՒՑԻՉ

ԽԻՍՏ ԱԽՈՐԺԱՀԱՄ

TAMAR INDIEN GRILLON

Ընդդէմ ՓՈՐՀԱՐՈՒԹԵԱՆ բլեներթուլթեան, գլխացաւի, մաղձի, անախորժութեան, ստամոքսի և աղեաց անհանգստութեան

ՓԱՐԻԶ, Է. ԿՐԻՅԼՕՆ, 33, Արշիվ փողոց և դեղարանաց մէջ. 33, rue de Archives   120

Լ'ԷՔՕՆՕՄԻ ԷՆԹԷՐՆԱՍԻՕՆԱԼ

L'ECONOMIE INTERNATIONALE

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ապահովագրական փոխադարձ ընկերութիւն վասն վերակազմութեան դրամագլխոյ

Հաստատեալ Գաղղիոյ Հանրապետութեան 1868 յունվար 22 հրամանագրոյն համեմատ

ԿԸ ԳՈՐԾԷ ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂՂԻՈՅ ՏԷՐՈՒԹԵԱՆ

Ամեն ոք գիտէ խնայողութեան կարեւորութիւնը, բայց շատ անգամ դժուարանալով մեր խնայած և աւելցուցած ստակներն ընդունող յատուկ հաստատութիւններ կը կորսնցնենք դրամագլուխ մը կազմելու առիթն և հազար ու մէկ պատճառներ գտնելով՝ մեր խնայածստակներն յումպէտս կըվատնենք:

Փոքր գումարներով դրամագլուխ մը կազմելն ալ դժուարին և գրեթէ անկարելի է, եթէ այսպիսի ընկերութեան մը հետ մասնաւոր կապակցութիւն մի չունենանք:

Ահաւասիկ «Լ'էքօնօմի էնթէռնասիօնալ» ընկերութիւնն որուն փոքր գումարներ, այսինքն ամիսը հինգ, տասը ևլն վճարելով, ապագային մեր ձեռքը կ'ունենանք համեստ դրամագլուխ մը:

ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԻՆՔ   39

Աւելի մանրամասն տեղեկութիւն ուզող և բաժանորդագրուիլ փափաքողները կը հրաւիրուին դիմել ի Սիրքէճի, հանրային պարտուց պաշտօնատան դիմացը, Կիւլպէնկեան խան, Թիւ 26-27. ընդհանուր տնօրէն Բ. ՇԷՀԻՐԼԵԱՆԻ կամ ընդհանուր քննիչ ԱՆԻՔՏՈՍ ԱՀԱՐՕՆԵԱՆԻ.

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՑ

Ութ օրը երկու անգամ կը բանին Լիվըրփուլի և Արեւելքի միջև

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ումպրիա	7718	Գադալոնիա	4845
Էդրուրիա	7718	Պօթնիա	4531
Սէրվիա	7391	Սամարիա	3574
Աւրանիա	7268	Մարաթոն	2403
Բաւոնիա	5587	Աթլաս	2393
Սեֆալոնիա	5517	Սարտինիա	2166
Կալլիա	4809	Թարիֆա	2246
Սիթիա	4557	Բալմիրա	2144
Ալէբբօ	2143	Թրինիտատ	899
Քէտար	1876	Մարօքօ	1855
Շէրգոսսքի	1614		

«Թրինիտատ» շոգենաւը, Նաւապետ Պաքըն, Լիվըրբուլէն աստ կը սպասուի դէպ ի դեկտեմբեր 13:

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՈԼԻ գործակալ
Thomas C. Joly
Ալիքսիաուս խան Թիւ 11
Ղալաթիա

17

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրփուլի և Միջերկրականի միջև բանող շոգենաւք

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Քանարիա	4200	Սֆինքս	3000
Ֆէրօս	4000	Օզայրիս	3000
Օսմանլի	4000	Նէֆթիս	3000
Սէսոստրիս	3250	Բէրա	3000
Թիպէր	3250	Լօթիւս	800
Մաքտալա	3250	Օլինդա	800
Մարիօթիս	3250	Իսիս	700

«Թիպէր» շոգենաւը դէպ ի ամսոյս 26ին աստ կը սպասուի ընդհանուր վաճառքով:

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և Ընկ.
Ուիթօլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
292   31, Ճէյմս Սդրիթ Լիվըրբուլ

ՌՈՒԵԱԼ ԷՔՍՉԷՆՃ

ԱՍԻՒՐԱՆՍ ՔՈՌԲՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720 ԻՆ

Դրամագլուխ աւելի քան Անգլ. ոսկի 4,000,000
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է » 35,000,000

Ընկերութիւնս կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամեն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք:

Վճարմունք ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ և իցէ ԶԵՂՉԻ կը կատարուին:

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ.
140   Պահճէ Գաբու, Մէյտանճըք սօքաք, Ուիթալ խան.

Ամեն անոնք, որք կ'ուզեն Ճավայի և Չինու ճշմարիտ թէյ խմել, պէտք է դիմեն Կ. Պոլիս, Պահչէ-Գաբու, Ճէլալ պէյ խանի կից թիւ 10 ՆԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, որու զանազան տեսակ թէյեր թէ՛ տեսակի ազնուութեան, թէ՛ ճաշակի և հոտի անուշութեան և թէ՛ գիներու աժանութեան կողմանէ անհամեմատելի են:

Յիշեալ վաճառատան թէյերը Թուրքիոյ բոլոր թէյավաճառաց քով կը գտնուին ի վերեւ դրուած մարքայով, որու կեղծերը ելած ըլլալով պէտք է զգուշանալ:

342   8—50

EMULSION SCOTT

(ՍԳՈՏԻ ՕՇԱՐԱԿ)

ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ՃՈՒՏ ԻՒՂ

Հիփոֆոսֆիթ կրի և սոտայի

Պատրաստեալ ձեռամբ ՍԳՈՏԻ և ՊՕՈՒՆԻ ի Նեւ-Եօրք.

Խմելու չափ ախորժահամ է

Մորուի ձկան հասարակ իւղէ բոլոր յատկութիւններէն զատ, հիփոֆոսֆիդներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճղճիմութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն.

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով:

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՄՄԸՐ ԵՒ ՀԷՐԵԼ

ՀԻՒՍԱՐԱՆ

221 Մեծ-Փողոց, Բանկալթի

Բանկալթիի մեծ հիւսարանին մէջ կը պատրաստուին մետաքսեայ, Փիլ տ'էքօսէ, բուրդէ եւ եաթրանմաւոր գուլպայներ եւ զանկալաններ, ձեռնոցներ, փաթաթակներ, քաշ-քօրսաժներ, անկողնոյ ծածկոցներ եւ հիւսուածագործութեան ուրիշ ամեն տեսակ նիւթեր:

Տնօրէնութիւնը շնորհակալ կ'ըլլայ բազմաթիւ յաճախորդաց, ինչպէս նաեւ այն ընտանեաց որք բարեհաճած են պատուել զինք իրենց յանձնարարութիւններով, եւ կը յուսայ թէ պիտի հաճին շարունակել յառաջիկային նախապատուութիւն տալու տեղական սոյն գործարանի նիւթերուն, որք տեսակի մասին նման են Եւրոպիոյ սոյն օրինակ նիւթոց եւ աւելի աժան են անոնցմէ:

Գործարանը կը վաճառէ նաեւ ընտանեաց համար հիւսելու լաւ մեքենայներ եւ գործաւորուհեաց յատուկ այլ մեքենայներ որք կրնան օրը մինչեւ 24 զոյգ արտադրել, հիւսուածագործութեան դասեր ալ կը տրուին:

253

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷԼԻ

Սկսեալ ի 1 Հոկտեմբեր (Ն. Տ.) 1892, մինչեւ զնոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	8	62	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	42	44	46	48				
	Առաւօտ												Իրիկուն													
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս ...	6 00	6 30	7 00	7 30	8 30	9 ...	9 30	10 ...	10 30	11 ...	11 30	12 ...	1 30	2 ...	2 30	3 ...	4 ...	4 30	5 ...	5 30	6 ...	6 30	...	...	...	...
Գումգաբու ...	6 09	6 41	7 09	7 39	8 40	9 9	9 40	10 9	10 39	11 9	11 42	12 9	1 39	2 9	2 39	3 9	4 09	4 41	5 10	5 39	6 09	6 39	...	...	...	...
Ենիգաբու ...	6 13	...	7 18	...	8 44	9 13	9 44	10 13	10 43	11 13	11 46	12 13	1 43	2 18	2 43	3 13	4 13	4 45	5 14	5 43	6 13	6 43	...	...	...	...
Տաւուշ փաշա ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա ...	6 19	...	7 19	...	8 50	9 18	9 50	10 18	10 49	11 19	11 52	12 19	1 49	2 18	2 49	3 19	4 19	4 51	5 20	5 49	6 19	6 49	...	...	...	...
Եէտի-գուլէ ...	6 23	6 53	7 23	7 48	8 54	9 20	9 54	10 20	10 54	11 23	12 09	12 22	1 53	2 20	2 53	3 23	4 21	4 56	5 25	5 55	6 23	6 55	...	...	...	...
Մագրիգիւղ ...	6 36	7 12	7 36	8 03	9 08	...	10 8	...	11 8	11 34	12 19	...	2 04	...	3 03	3 38	4 37	5 06	5 37	6 07	6 37	7 7	...	...	...	...
Այ Ստեֆանոս ...	...	7 26	...	8 12	9 17	...	10 17	...	11 17	11 44	...	...	2 13	...	...	3 47	4 47	...	5 46	6 17	...	7 16	...	...	...	...
Քիւչիւք Չէք. ...	...	7 36	...	...	...	...	...	...	...	11 53	...	...	...	...	...	...	...	...	...	6 26	...	...	...	...	...	...

ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷԼԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	41	43	45	47	49	61				
	Առաւօտ												Իրիկուն													
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Չէք. ...	...	...	7 15	...	...	...	...	...	...	...	...	12 45	...	...	...	...	...	...	...	...	...	7 07	...	...	...	...
Այ Ստեֆանոս ...	6 25	...	7 24	...	8 30	...	9 30	...	10 30	11 25	...	12 57	...	...	2 25	...	3 57	4 28	...	5 58	...	7 22	...	...	...	...
Մագրիգիւղ ...	6 34	7 13	7 36	8 12	8 41	...	9 41	...	10 40	11 40	12 40	1 10	...	...	2 34	3 11	4 06	5 09	5 38	6 08	6 38	7 44	...	...	...	...
Եէտի-գուլէ ...	6 50	7 24	7 47	8 24	8 53	9 25	9 53	10 25	10 52	11 55	12 52	1 24	1 52	2 25	2 50	3 22	4 21	5 3	5 52	6 22	6 52	8 07	...	...	...	...
Սամաթիա ...	6 56	7 28	7 51	8 28	8 57	9 28	9 57	10 28	10 56	11 58	12 56	1 28	1 56	2 28	2 56	3 26	4 26	5 27	5 56	6 26	6 56	...	...	...	...	...
Տաւուշ փաշա ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Ենիգաբու ...	7 02	7 34	7 57	8 34	9 03	9 34	10 03	10 34	11 02	12 04	1 02	1 34	2 02	2 34	3 02	3 32	4 32	5 33	6 02	6 32	7 02	...	...	...	...	...
Գումգաբու ...	7 08	7 38	8 01	8 38	9 08	9 38	10 08	10 38	11 08	12 08	1 08	1 38	2 08	2 38	3 08	3 38	4 38	5 38	6 08	6 38	7 08	8 23	...	...	...	...
Կ. Պոլիս ..	7 16	7 46	8 09	8 46	9 16	9 46	10 16	10 46	11 16	12 16	1 16	1 46	2 16	2 46	3 16	3 46	4 46	5 46	6 16	6 46	7 16	8 32	...	...	...	...

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մագրիգիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջև բանող կառախմբոց մէջ միայն կ'ընդունուին.

Տնօրէնութիւն, Թիւ 8, 10, 14, 43, 17 և Թիւ 49 կառախումբերը միայն վայրկեան մը կանգ պիտի առնուն ի Չէյթուն-Պուրնու: 1

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ